


1083

↳

IV.6

1083
IV.6
2



HAMALSARAN (UNIVERSITÉ)

Revue Arménienne Scientifique & Littéraire

DEUXIÈME ANNÉE


DIRECTEUR: MISSAC BAGHDASSARIAN



ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ


ՏՆՅՐԷՆ-ԻՄԲԱԳՐԱԳԵՏ Մ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ



ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

(1901-1902)

ԹԻԻ 1-12



Փ Ա Ր Ի Չ

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ — ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ — ՏՊԱՐԱՆ

4, Rue Ortolan - PARIS

BAMALSAHAN (UNIVERSITE)

Centre d'Etudes Scientifiques & Littéraires

DIRECTEUR: M. H. S. KANDASWAMI

INDIAN

UNIVERSITY


of the

of the

of the

of the

(1901-1902)



of the

of the

of the

«ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Ի Բ. ՇՐՋԱՆԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

ԽՄԲԱԿՐԱԿԱՆՆԵՐ

	էջ
Գիտութիւնը եւ Հայերը (Միսսֆ Պաղտատեան)	1
« Համալսարան » Ի Բ. Շրջանին առթիւ	349
« Համալսարան » կը յայտարարէ	65
Հայկզերը եւ գիտութիւնը (Միսսֆ Պաղտատեան)	35
Ճշմարիտ ուղին	257
Մեր Ուսանողութիւնը	225
Յուսախափութիւններ (***)	193
Քննադատութեան ոգին (Մոզ-Պէս)	129

ԴԱՍՍ.ԽՕՍՈՒԹԻՒՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱ.ԽՕՍՈՒԹԻՒՆ

Առողջապահական դասեր . Կերակուրները — Պրոֆ.	
Պրուստ — (Կ. Յովհաննեսեանց)	51, 81
Բուսականութիւններ եւ վարակիչ հիւանդութիւններ—	
Փրոֆ. Տակիլլօն — (Նշան)	109, 150
Գիտութեան հասողութիւնը եւ բժշկութիւնը — Լանըլոնկ — 6	
Դպրոց եւ բարոյական դաստիարակութիւն — Փրոֆ.	
Լ. Ժ. Վառէ —	163, 201
Դպրոցը եւ առողջապահութիւնը	264, 326
Երկրի Շարժումը (Նշան)	289
Ժամանակակից առողջապահութիւնը—Ժ. Կուրմոն — 13	
Զեւաչըճում - Ի. Փէոիէ - (Ս. Երկանեան) 195, 231, 274, 317	
Մասնաւոր Պէոթըլօյի ճառը (Նշան)	67
Մարմնական մաքրութիւն	207, 36
Փասկալի վարդապետութիւնը — Էմիլ Պուլթոն —	
(Մոզ-Պէս)	41
Փոխացելի հիւանդութիւններ. — Պրոֆ. Պրուստ — (Կ. Յ.) 158	
Քանթի վարդապետութիւնը — Փրոֆ. Սէայլ — . 139	
Ձրանս. թատր. 18րդ դարու մէջ—Կ. Լառումէ (Մոզ-Պէս) 71	

ԿԵՆՍԱԿՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ալֆօնս-Միլն Էսոուառ (Նշան)	21
Էմիլ Զօլա (Մոզ-Պէս)	283

Լամառք — Շառլ Մանթէն-	169
Ռոտուլֆ Վիրխով	297
Վիքթոր Հիւկո (Միսսֆ Պաղտատարեան)	98, 132

ՅՈՒՅԵԼԵԱՆՆԵՐ

Մխիթար Սեբաստացու յորելեանը (Մ. Պ.)	26
Պէտիլի. յիսնամեակը Փարիզի Սոսպոնին մէջ (Եշան)	61
Ռէթէնս Պէրպէրեանի քսանըհինգամեակը	27

ՄԱՀԱԶԴԵՐ

Հ. Արսէն վրդ. Այառնեան (Խնք.)	242
Հ. Ղեւոնդ վրդ. Ալիշան »	63

ԸՆԿԵՐԱԿԱՆ և ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

Երկրիս Շարժումը	289
Կինը բանտին մէջ	252
Վախը — Փր. Թ. Մօսօ — (Մ. Մալաֆեան)	219, 251
Մահուան վրայ մտածումներ	357

ԳԻՏԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ և ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ալքոլամոլութիւնը և Թոքախտը	93
Ախտաբանական բնախօսութիւն	24
Ածխածխածնաթուփ հեղձամահերը	299
Այծին կաթը	92
Անձրիւ արհեստական միջոցներով	181
Աշխարհիս գրքերու վիճակագրութիւնը	371
Արեան խանգարումները բարձրութիւններու մէջ	61
Արեգակին ջերմութեան փոփոխութիւնները	334
Արհևոտ. կրթութիւնը և կաշիի ճարտարարուեստը	304
Բժշկութեան ուսանողներու թիւը Ֆրանսայի մէջ.	180
Բնախօսական քիմիա	24
Բորոտատուն մը Միացեալ-Նահանգներու մէջ	121
Բուժիչ լոյսի	119
Գեղեցկութիւնը և վազըլիինը	25
Ելեքարականութիւնը իբր անզգայացուցիչ	303
Երաժշտութիւնը և մեծերները	93
Երկրաչարժիները	301
Զառիկը բնութեան մէջ	303
Թեւաւոր մրջիլներու անձրեւը	301
Թոքախտին շուրջը	298
Թուլաններու թռիչքին բարձրութիւնը	94
Ժանտախտը Օտէսայի մուկերուն մէջ	214

ժանտախար 1901 թուականին	246
ժանտախար եւ Շիճկարութութիւնը	91, 367
Ծաղկախտի դարմանը գարեջրի քախցունով	120
Ծերութեան կենսաբանութիւնը	90, 364
Կայծակին պատճառած չարիքները	215
Կապոյտ հոգը եւ պատուաստը	302
Կապոյտ հազի միքրոպին եւ Շիճուկին գիւտը	331
Կարմրախտը եւ շիճկարութութիւնը	302
Կարմրախտի դարմանը բուսականի էութեամբ	243
Կովու կաթին ժառանգական յատկութիւնները	183
Կրօնական սովորութիւններ եւ վարակում	367
Հակակառաղական պատուաստումները	245
Հիւանդութիւնը տարածումը ճահիճներու միջոցաւ	305
Ձեռքերու հականիխումը էութեանց միջոցաւ	306
Մազերու սպիտակնալուսն պատճառը	90, 364
Մեղուներու համաճարակ հիւանդութիւնը	335
Մսակեր հաւերու հուկիթները	121
Յարգանք պարոն Մարէյի	90
Նախզրուչկն ներարկումն ժանտախտի դէմ 26, 91, 367	
Ոգելից ըմպելիները, անոնց էութիւնները եւ վտանգաւոր բաղադրութիւնները	244
Ուղեղային կիսագունտերէն զրկուած աղաւնիի մը կրթումը	182
Ուղեղին կշիռը մարդուն եւ կնոջ մօտ	243
Չեփուած ընդեղէնները եւ միքրոպները	244
Ջերմի դէմ պայքար	59
Ռոտուլֆ Վիրխովի մահը	297
Սիրտը եւ վիրաբուժութիւնը	176
Վայրենիներու վիրաբուժութիւնը	59
Վիէննայի հիւսուածաբանական դպրոցը	305
Վիպասանութեան քանակը եւ անկէ պահանջուած ոգին զանազան ազգերու մէջ	370
Վիքթոր Հիւկոյի հարիւրամակը	118
Կազաքակրթութիւնը եւ ծննդականութիւնը	213
Բանսէրի դարմանը	95
Օգին եւ ծովային ջրին միքրոպաբնկն վերլուծումը	60

ՎԵՐՁԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդհ. տեսութիւն (Հայ. գրքեր եւ թերթեր)	28, 68
Հայ պարբերական Մամուլ	122

ա.) Հայերէն գրքերու շարքը

Ա. Եարճանեանի հատորը	63
Բժշկի գրոյցներ N° 5, 6, 7,	339
Հ. Թ. Հ. Դպրոցների կանոնադրութեան նախագիծը	217

Մարդակազմութիւն Մխիթար Պոնտացոյ	63
Մարդկութեան ամենամեծ թշնամին	187
Վարակիչ հիւանդութիւններ եւ նրանց թոյնը	218
Փարիզի Հայոց Բարեգործ. ընկ. շրջաբերականը	191

բ.) Հայերէն թերթերու շուրջը

Ազատ կօսք	28
Արտէմիս	124, 215, 310
Բազմավէպ եւ Գեղունի	128, 308
Բանասէր	127, 188
Հոյս—կիսամտեայ հանդէս—	64
Խոռվքը «Մուրճ»	247
Հայ եկեղեցականութեան շուրջը, Մուրճ եւ Համալսարան	184
Հանդէս Ամսօրեայ	307
Հանդէս Ամսօրեայի մէկ յօդուածը	64
Մեր վերջին քննադատութիւնը «Մուրճ»ին վրայ	345
Մուրճ	314
Պատանի	341
Սոււո լուրի մը առթիւ	345

գ.) Ֆրանսերէն Հրատարակութիւններ

Գիտութեան ազդեցութիւնը Ֆրանս. գրականութ. վրայ	28
Ընկերային առողջապահութիւն — Էմիլ Տիւքլօ—	96
« Լա Ռըվիւ » — Քանսէրի դարմանը	95
Կենդանի էակին միութիւնը — Ֆ. լը Տանթէք—	96
Ջղայինի մը Ձ1 օրերը — Օքթավ Միրպօ —	30

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Հայրապետական Կոնգակ «Համալսարան» ի խըմբագրութեան	32, 33
Վիքթոր Հիւկոյի լուսանկարը	97
Փարիզի Բնապատմական Միւզէօմը	31
Քարթ փոսաւներու հաւաքածոյ մը	348

ՔԱՆԻ ՄԸ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Սխալ	Ուղիղ
4	33	սերունդի մը	սերունդներու
5	19	հետապնդեն	հասնին
38	19	հովութեան	հովուութեան
101	18	Այն վայրկեանէ	Այն վայրկեանէն
102	7	անպէտք	անպէտ
102	27	իրականացման	արտայայտութեան
103	13	նախարարապետ	պետական նախարար
125	40	վիրաւորուող	վիրաւորող
127	26	Գ. տարիին	Գ. տարիին
131	6	նշանաւոր քանդակա- գործ մը, Ռօտէն, եւ	նշանաւոր քանդակ- կագործ Ռօտէն մը եւ
133	21	կը խօսուի	կը խօսի
134	28	անոր	անոնց
216	31	իւրացած	իւրացուցած
215	24	ճամբան պեղած	ճամբայ մը պեղած են
228	3	կը տրուի	կը գրուի
230	19	հարկ է	հարկ է որ
309	12	անկախութիւն	անկախութիւնը
314	26	կը գուժէր	կը հաղորդէր
342	19	պ. եւ Թումանյանի	եւ պ. Թումանյանի
351	1	Քայքայելու	Քայքայուելու
351	19	եւ թէ ըմբռնել	եւ ըմբռնել թէ
351	20	homme de lettre	homme de lettres

Ծանօթ. — Վրիպակներու մէջ մատնանիշ ըրինք միայն
անոնք որոնք իմաստի սխալի մը անդի կուտան: Տպագրա-
կան եւ ուղադրութենէ վրիպած ուրիշ անկարեւոր վրիպակ-
ներու սրբագրութիւնը մեր ընթերցողներուն կը թողունք:

ԽՄԲ.



TABLE OF CONTENTS

Introduction	1
Chapter I	10
Chapter II	25
Chapter III	40
Chapter IV	55
Chapter V	70
Chapter VI	85
Chapter VII	100
Chapter VIII	115
Chapter IX	130
Chapter X	145
Chapter XI	160
Chapter XII	175
Chapter XIII	190
Chapter XIV	205
Chapter XV	220
Chapter XVI	235
Chapter XVII	250
Chapter XVIII	265
Chapter XIX	280
Chapter XX	295
Chapter XXI	310
Chapter XXII	325
Chapter XXIII	340
Chapter XXIV	355
Chapter XXV	370
Chapter XXVI	385
Chapter XXVII	400
Chapter XXVIII	415
Chapter XXIX	430
Chapter XXX	445
Chapter XXXI	460
Chapter XXXII	475
Chapter XXXIII	490
Chapter XXXIV	505
Chapter XXXV	520
Chapter XXXVI	535
Chapter XXXVII	550
Chapter XXXVIII	565
Chapter XXXIX	580
Chapter XL	595
Chapter XLI	610
Chapter XLII	625
Chapter XLIII	640
Chapter XLIV	655
Chapter XLV	670
Chapter XLVI	685
Chapter XLVII	700
Chapter XLVIII	715
Chapter XLIX	730
Chapter L	745

THE UNIVERSITY OF CHICAGO
 LIBRARY

Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն

ՏԵՐԵՆ-ԽՐԱԳՐԱՊԵՏ Մ. ՊԱՆՏԱՍՐԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խոնարհական

Գիտութիւնը եւ Հայերը (ՄԻՍՍ.Ք ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ) 1

—
Դասախօսութ. եւ Հրահարակախօսութ.

Գիտութեան Հաստդութիւնը եւ Բժշկութիւնը (ԼԱՆԸԼՕՆԿ) .. 6

Ժամանակակից Առողջապահութիւնը (Ժ. ԿՈՒՐՄՕՆ) 13

Գիտական Կենսագրութիւն

Ալֆօնս-Միլին էտուան (ՆՇԱՆ) .. 21

Գիտական Լուրեր եւ Նորութիւններ

Բնախօսական Քիմիա 24

Ախտ. Բնախօսութիւն 24

Գեղեցկութիւնը եւ Վազըլիւնը .. 25

Նախնորոշական Ներարկումներ ժանտատենդի դէմ 26

Յորեղաններ

Միսիթար Սերաստացու Յորեղանը (Մ. Պ.) 26

Ռէթէոս Պէրպէրեանի քսանհինգամեակը 27

Վերջին Հրատարակութիւններ

Հայ Գրքեր եւ Թերթեր 28

Ֆրանսերէն Գրքեր 28

Գիտութեան Ազդեցութիւնը

Ֆրանսական գրականութեան վրայ 19րդ դարուն մէջ 28

Ջղայիսի մը 21 օրերը. Օքթավ Միրպօ (Ֆ. ԼՕԼԻԷ) 30

Կրթական Հաստատութիւններ

Փարիզի Բնապատմի. Միւզէօմը (ՆԷՐՈՒՍ) 31

—
Հայրապետական Կոնդակ (ԽՄԲ.) 32

Բ. ՇՐՋԱՆ (1901-1902, ԴԵԿՏԵՄԲԵՐ) ԹԻՒ 1

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ — ԽՐԱԳՐԱՊՈՒԹԻՒՆ — ՏՊԱՐԱՆ

4, Rue Ortolan - PARIS



«ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԵՐԿՐՈՐԳ ՇՐՋԱՆ

1901 — 1902 ՏԱՐԻ

ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Եթէ քննենք իրերը մօտէն, եթէ հետամուտ լինինք անոնց իմաստասիրութեանը, պիտի գտնենք որ անոնց շարժիչ ուժը, հակառակ իրարու մէջ ունեցած անհուն զանազանութիւններուն, կը բղխի մէկ յատկութենէ մը միայն, այսինքն անսկզբի թէ անոնք ի՛նչպէս կը սպասուին կենդանական աշխարհին վրայ:

Եթէ ամէն գնահատում սպասուրութենէ մը կը ծագի, խիստ ճշմարիտ է գիտել որ ամէն սպասուրութիւն ալ միշտ համընթաց է գիտակցութեան մը որ կուտայ գնահատանքին իր սեպհական դրօշմը:

Գիտակցութիւնը սակայն, ըստ ինքեան, աշխարհէն եկող բազմազան թեւադրութիւններու և մակամական անհամար երեւոյթներու հետեւութիւնն է. ու այդ թե-

լազրական աշխարհը կը կազմեն այն միջավայրը ուր մենք կը բնակինք, այն ընկերութիւնը ուր մենք կը յաճախենք, այն կրթութիւնը զոր մենք կը ստանանք եւ վերջապէս ամեն ինչ որ կարող է մտածում մը, գաղափար մը արթնցնել եւ մտքին վրայ պատկեր մը յաւերժացնել:

Ս, յնպէս որ մարդս ենթակայ իր ծնած օրէն իրեննեւրուն, իր գիտակցութեան ուղղութիւնը կը ստանայ, սկզբնապէս, անոնց իրեն փոխանցած ներշնչումներէն, անոնց ունեցած ձգտումներէն, մէկ խօսքով անոնց արամարած գիտակցութեան որակէն ու քանակէն:

Այս անխուսափելի ազդեցութիւնը կը շարունակուի երկրորդ ֆազի մը մէջ, նախ դպրոցն է այդ եւ յետոյ ընկերութիւնը, որ տիրապետող եւ յարատեւ շրջանը կը դռնայ, վերջ ի վերջոյ, կեանքի իմացական զարգացումին եւ վերջապէս մարդկային ցեղի դաստիարակութեան:

Ընկերական ամեն կարկառուն յատկանիշ, փոխն ի փոխ, իր տպաւորիչ դերը կը խաղայ այսպէս, իրեն ենթարկուած մտքին վրայ. հոս՝ կրօնական դերադասուած մոլեռանդութիւն մ'է որ կը կազմալուծէ անհատական եւ հաւաքական անկախ ձգտումները, հոն՝ շահախնդիր եւ անձնատէր քաղցած ախորժակներ են որ կը խռովեն թափուած ճիգերը, ու, մարդկութիւնը, ամբողջ կ'ենթարկուի միշտ պատճառներու ազդեցութեանը, կը ներգործուի անոնցմէ նմանողարար եւ այդ պատճառաւորականութիւնը (determinisme) կը կազմէ ընկերութիւնները եւ ամբողջ մարդկութիւնը:

Քանի որ իրեն մասնաւոր ուժն ունի ամեն ինչ որ թելադրութիւն մը կը ծնի, — բնագրը, քաշաքական վիճակը, կրօնքը, հրապարակը պատող կարծիքները, ընթերցանութիւնը, — մարդկային ցեղի յստաջիւղութեան մէջ եւ յետադիմութեան՝ փոխադարձաբար, ընկերական որ եւ է հարցի ճշմարիտ վերլուծումը այս համադրական տեսութեամբ կատարելու է, որ միայն ստոյգն է, թէ եւ բոլորովին նոր՝ ըլլալով դարավերջիկ իմաստասիրութեան հիմը:

.. ** ..

Թէ ինչո՞ւ հայկական միտքը, «գիտական միտքը» այնքան տարտամ, այնքան տժգոյն կը ներկայանայ, իր

ընդհանուր գծերուն մէջ. թէ ինչո՞ւ հայը ապէտ է :
Ու գործի փոխուող գաղափարը, ինչպէս ամեն կողմ,
մեր մէջ ալ կը ծագի մեր գաստիարակութեան եղանակէն
նախ եւ յետոյ մեր մամուլէն, մեր առհաւուրներէն եւ, մէկ
խօսքով, մեր ապրած միջավայրին թելադրականութենէն :

Այն գաստիարակութիւնը զոր մենք կը ստանանք
սարամբերտ եւ երկիւղած խորհուրդներու ոգին ունի, որ
կը բխացնէ աղածրի հասակին դիտելու, սորվելու ինքնա-
բեր կարողութիւնները. ամեն երեւոյթ, բնութեան ծոցէն
ծագած, թէեւ սարգ, թէեւ բացատրելի, հպատակութիւն
մը ենթագրիկ կուտայ : Մեզ շրջապատող բնութիւնը ար-
հաւիրք մը կը գտնայ, նախախնամային գաղտնիք մը
և. անմատչելի, անհասկնալի առեղծուած մը. այդ թե-
լայրուրեան տակ մանուկը կ'ապրի էապէս իր ճշմարիտ
միջավայրէն դուրս՝ սարբեր երկնքի մը տակ, ու ան կը
մեծնայ անձանօթին առջեւ խոնարհելու եւ անոր գիւտին
հետապնդիչ իտրուէն զուրկ խառնուածքով մը. անսարբեր
չուրջը անցած դարձածին՝ կանխահաս ագիտութեան մը
խաւարին մէջ :

Այսքան գէշ հիմի վրայ գրուած մեր գաստիարակու-
թիւնը, իր շարունակութեան մէջ դրական խիստ միա-
կողմանի ծանօթութիւններու կը յանգի, որ կը սանին
մեզ դէպի երեւակայականը, դեռ չճշդուած գաղափարակա-
նութիւն մը եւ երբէք գէպի բնութեան օրէնքին փորձա-
ռական ծանօթութիւնը :

Այսպէս, այդ գաստիարակութիւնը չունենալով գի-
տական որ եւ է նկարագիր, մեր ցեղային իմացականու-
թիւնը իսպառ զրկուած է՝ բնութեան ճշմարտութիւնները
խուզարկելու զօրացուցիչ եւ կենսատու ոգիէն : Որպէսզի
միաքը լուրջ համոզումի պայծառութեամբ մը համեստա-
նայ, պէտք է որ քննէ, իմանայ թէ ի՞նչպէս փափաքէ
ու կամքէ անկախ պատճառներով՝ բնութեան օրէնքները
կը հաստատուին. ու այդ գիտակցութիւնը, ոչ միայն
պիտի արթնցնէ ինքնաճանաչութիւնը, այլ եւ կանուխէն
պիտի խմորէ միաքը առանց անձնասիրութեան եւ շահա-
խնդրութեան, պարտաճանաչութեան չունչով մը :

Ու զրկուած այսքան գեղեցիկ ու բնական կրթութիւնէ
մը, մեր մտաւորականութեան մեծագոյն մասը կը տարու-
բերի ապէտ ամբոխին խաւարամտութեան եւ անզուսպ կիր-

քերուէն հեւքովը, ամբոխ մը՝ որ միայն իր սովորամու-
լութեան ու մտին եւ արեան ձուլուած ներշնչումներուն
կը լսէ, ամբոխ մը՝ որ իր այլասերուած արամաբանու-
թեամբը, ճակատագրին յանձնած ինքզինքը, կը քայլէ
դէպի կործանումը, դէպի անհետացումը:

Ազգերը բարգաւաճող գիտական լոյսէն զուրկ՝ մինք
չունինք մամուլ մը գոնէ որ մեզի յուսադրել տար ապա-
գայ բարեխառնում մը: Քիչ բացառութեամբ, մեր հրապա-
րակազրուութեան ներկայացուցիչները կը խօսին տգէտ
ամբոխին բնախօսութեամբը, — որ երբէք կենդանութիւն
մը, ճիգ մը չենթադրեր իր մէջ, այլ միայն անփորձ
ծութիւն եւ աղէտաւոր անշարժութիւն: — Եւ փոխա-
նակ մեղմացնելու չարիքը կը յուզվառեն զերբազրու-
թիւնը, կը հրահրեն կիրքերը դէպի նորարողոջ ճշմար-
թիւնը, դէպի ժամանակայրմար եւ նորագոյն (բնակա-
նաբար այս երեւոյթին տակ խրտչելի) դաստիարակու-
թիւնը, այսինքն գիտութիւնը, իբր նախապատմական
դպրու ծնունդներ: Իրենցմէ մեծ ծառայութիւն մը չպիտի
ըլլար պահանջածնիս, եթէ միայն սուս ըլլալ համա-
կերպէին, արդէն իսկ դժուար գիտական ծաւալումին
առջեւ խոչընդոտներ չհանելով:

Թո՛ղ երգեն այդպիսիները իրենց սովորական յան-
կերզը, «աստուածացում եւ երկրպագութիւն ոսկելիք
տգիտութեան»: Թո՛ղ յղփանան իրենց սեւ կեղեւին մէջ, —
իրենց ամեն ազատութիւն, — միայն թէ չի թունաւորին
մտքերը, չ'ապականեն ապագայ բնորոյականը, ապագայ
սեղունդներու սիրոյն համար:

Առանց ասոր իսկ, որովհետեւ, դէպի գիտական
հրապարակագրութիւն մը թափուած ճիգերը՝ մեր միջա-
վայրին խոպան միտքերը չարժեղու համար, աներևակա-
յելի անտարբերութեան մը պիտի բաղխին, քանի որ
իրենց հայերու թելադրութեանը տակ անընդունակ խառ-
նուածքով սնած սերունդի մը հարկ պիտի ըլլայ խօսիլ,
անոր էութեանը հետ աաշուած յոռի ձգտումներ պէտք
պիտի ըլլայ եղծանել:

Եւ այն միակ ու եզակի անձը որ առաջինն փորձեց
մաքրագործել այդքան ապաւոյջ եւ մոլեռանդ մամուլի մը
արտագրութիւնները, ու մտադրեց բնաւ չընկրկել մինչեւ
իր նպատակին նուիրագործումը, հաշտուեցաւ նախ գո-

հարերումի ամենէ խոշոր ու զբաւիչ գաղափարին հետ, անվրդով ու աներկիւղ կուրծք տալով լորձունքոտ անարգանքներու եւ խոժոռ բանագրանքներու բրգացումներուն: Հարուստ ծնած՝ աղքատ մեռաւ ան ու այն շրջանը, զոր ստեղծեց, սակաւին խիստ մէկ աննշան թիւը կը ներկայացնէ մեր ինքնազատան եւ անխորհուրդ մտաւորականութեան մէջ:

Մեր ցեղական բնազդները եւ յուսի սովորութիւնները փայփայող, անոնց արմատացմանը նպաստող այսքան ախուր մամուլի մը քովը, մեր ընթերցասիրութիւնը (այսպէս խօսելով) խարխափած է իմացականութիւնը քննող, անպայման հաւատք թելադրող գրքերու եւ կամ մեր ազիտութիւնը օրօրող վիպասանութիւններու մէջ:

Ուրեմն ուրացումի գաւակները, — ուրացում գէպի մեր զառամած գաստիարակութիւնը, ուրացում գէպի մեր ապրակնող ու անբարոյացուցիչ մամուլը, ուրացում գէպի մեր ազիտութիւնը վերջապէս, — անհաւասար պայքար մը պէտք է մղեն մինչև որ, իրենց սրբազան նպատակին հետապնդեն. ու յաղթանակին անվրիպելիութիւնը այնքան զեղած իծալ պիտի ներկայանայ, որքան իրենց անվիճեր, խրոխտ քարոզներով՝ գէպի մոլորութեան խորանր, գէպի զիտութեան փրկաւէտ հանգրուանը՝ ընդվզուովի զաւակներուն մեծաթիւ գալուստ մը փութացնեն:

Հանարարան այդ նուիրական ոգորումին մէջ իր բոլոր ուժը պիտի շարունակէ սպառել՝ առանց լքումի եւ առանց վերապ սնութեան: Համոզուած թէ ինչպէս դեռատի ուղեղները՝ նոյնպէս ալ ամբողջ մարդկութիւնը թելագրութեան դերին է, ան պիտի կռուի հոգեւին, ապառոջ ու յիաստիսր գաղափարներուն մեր մէջ թափանցելով՝ հիւանդագին համաճարակներ զառնալու վտանգին դէմ, օտտելով իր հակազդող թելագրականութիւնը գիտութեան սղատապրիչ սփիով:

ՄԻՍՍԷ ՊԱՐՏԱՍՄԵԱՆ

ԳԻՏՈՒԹԵԱՆ ՀԱՍՈՂՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

(Հրատարակախօսութիւն * քօփեւոր ԼԱՆԸԼՕՆԿԻ,
ձրսնական Ակադեմիայի)

Պարոն Նախագահ Հանրապետութեան,
Տիկիներ եւ Պարոններ,

Հանրապետութեան կառավարութեան եւ անոր Պետին ներկայութիւնը, հոս համախմբուած անձերու առջեւ, որոնք աշխարհի ամեն անկիւններէն՝ իրենց մտածումներու եւ աշխատութիւններու պտուղով՝ իրենց ցեղին հանճարը կը բերեն մերինին վայրկենապէս միացնել, ամենէ՛ բարձր գնահատութեան նշանն է, որ կրնար սասանալ մեր համաժողովը:

Այն նպատակը որուն մենք կը հետապնդենք, առանց լքումի եւ առանց հանգստի, ուրիշ բան չէ բայց եթէ մարդուն բաղդին բարելաւութիւնը: Այնքան մօտէն կը շօշափէ մեր այդ ձգտումը անոր տպագան եւ այնքան վճռական ծրագիր մը եւ այնպիսի ջանքերու շարունակութիւն մը կը բերենք անոր, որ ոչ ոք պիտի կարենար անտարբեր մնալ դէպի այն գաղափարները զոր խիստ բարձր մտածում մը կը վարէ եւ զոր կը ներշնչէ անհամեմատ օգտակար մարդասիրութիւն մը:

Հոս, քաղաքականութիւնը կը դադրի. ամեն պաշտօնական հանգամանք կը ջնջուի անտանձնան ազատութեան մը առջեւ որ, բացարձակ ու անբաժան հեղինակութեամբ, կը վարէ մեր դէպի ճշմարտութեան գիւտը հետապնդող խուզարկութիւնները: Անոր անունով է որ այս վայրկեանիս այնքան այլազան մտաւորականութեան մը ներկայացուցիչները միասին հաւաքուած են: Ոմանք, ամբողջուած

*) Խօսուած Միջազգային Բժշկական հասկածողովի բացումիս:

մասնագիտութեան մը մէջ, անոր կատարելագործումը փութացուցած են եւ կը փայլին հոն առաւել կամ նուազ հոչակով մը: Ուրիշներ, այլապէս օժտուած, եւ որոնք սահմանափակումի մը մէջ խիստ պիտի նեղուէին, ընդհակառակը, ողջագործած են աւելի լայն հորիզոններ, որոնց սահմանները գիտցան ընդարձակել՝ ապացուցանելով որ ոչինչ կը վերջանայ եւ ոչինչ վերջացած է:

Բայց, բոլորն ալ, առանց բացառութեան, ինչպէս ամենէ համեստները՝ որոնց գործը իր արժէքն ու օգտակարութիւնը ունի, նոյնպէս անոնք՝ որոնք գիւտեր կ'ընեն կամ նոյն իսկ հանճարին կը մօտենան, ուրիշ մտածում չունին բայց եթէ մեր արուեստին ծառայել՝ ամբողջովին անոր նուիրուելով եւ զայն յարատեւութեամբ յօգուտ մարդկութեան կիրարկելով:

Այս գարու տակաւին անանուն արշաւոյսը, իր միտնգամայն վեհախառ եւ փոփոխուն գոյներու առաջին լուսաշողուններուն հետ կը բերէ խուրձ մը սկզբունքներ՝ այնքան անծանօթ անցեալին մէջ որքան են տակաւին մեզ այն խորրդաւոր լուսածփունները (ondulations) որոնք տարածուած են արեւապատկերին (spectre solaire) մէջ՝ կարմիրէն սկսած մինչեւ ծարսգոյն մանիչակադոյնը (ultra-violette): Անոնք կը ծագին այն անբաղգատելի դաստիարակիչ ոգիէն որ կը թափանցէ ամեն տեղ եւ կը տանի կը տարածէ լոյսը, հաւասարութիւնը, ճշգրտութիւնը, սոյն տալով ուղիւր, մասնաճիւղ ընելով նպատակը, լուսաւորելով հաւասարը, զարգացնելով արուեստը, բըռնաբանելով վերջնապէս ամեն դուռ՝ մտցնելու համար ընկերական խմբումներու մէջ իր մարդասէր եւ խաղաղասէր խոտալը, կ'ուզեմ ակնարկել Իհսուքիւնը, ազագայ ամեն քաղաքակրթութեան անհրաժեշտ գործիքը:

Նա է որ պիտի լուծէ անտարակոյս օր մը համաշխարհային բարեբուր վերանորոգութեան հանելուկը, ոչ երբէ՛ք կազմալուծիչ կամ աւերիչ մեթոտներով, այլ կատարելագործելով կամ կերպարանափոխելով ինչ որ արդէն գոյութիւն ունի, առանց անօգուտ աղմուկներու՝ յառաջդիմութեան օրէնքին համաձայն: Բնաշրջումը, այսօր ամեն մարդ գիտէ, բնաւ ուսանող (brasseur) չէ, եւ եթէ պարագաները անոր գնացքը կ'արագացնեն եւ կամ կը գանդաղեցնեն, այդ բանին համար նուազ կերպով չէ որ կը

հնազանդի ան՝ անկասելի օրէնքի մը, ուրկից կը ծագին վերահաս կամ իրականութեան ճամբան մտած բոլոր փոփոխութիւնները :

Այս կերպարանափոխութիւնները, զարձեւալ, անխուսափելի են, եւ երբէք կարելի չէ նախագուշակել բազմի վիճակները անոնց, որ ատոնց ենթարկուած են : Սակայն եւ այնպէս այսօր անոնք ունին բաւական սուր բնոյթ մը, զանոնք տազնապներու նմանցնել կարենալու համար :

Իրօք, ընկերութիւնները կը հետեւին շարժումի մը որ իւրաքանչիւր օր աւելի կ'արագանայ պէտքերու շատութեան, գործիներու կատարելագործութեան, այսօր երկաթեայ՝ վաղը օդային ամեն տեսակ ճամբաներու քաղմագապակութեան համաձայն : Ատկից օգտակարութիւնը փոխանակութիւններու եւ յարաբերութիւններու, — փոխանակութիւնքաղափարներու եւ ճամբորդութիւն երկիրներու եւ անձերու ծանօթանալու, բարեկիրթ եւ համակրական առեւտուր՝ զիրար հասկնալու համար ստեղծուած իմացական մտքերու մէջ : Ինքնացումն գիտակցութեան այն ճիւղին որ տեսնուած եւ խօսելու առարկայ դարձած բաներէն կը ծագի, դնանտում իր սեղին մէջ իսկ ուրիշներու թափած ճիգերուն, բարոյական արժէքին եւ ձգտումներուն վրայ, ուղղակի քաղաքատութիւն իր եւ ոչ իր միջեւ յարաուելալիկերտութիւն մտածման իրարու հետ շօշափուելով, օրինաւոր ցանկութիւններ, վերջապէս, մագնակցելու իր վերաբերած ընկերութեան փայլելուն, այս ամէնը միթէ՞ չ'ապացնացանէր որ ելած ենք վերջնականապէս մասնագիտութեան նեղ շրջանակէն եւ թէ համալսելարձային նոր դաստիարակութիւն մը անհրաժեշտ կը դառնայ այն պահուն մինչ մինք կը կարծէինք թէ երկար ատենէ ի վեր գլորոցով այդ բանը կատարուած վերջացած էր :

Այսպէս՝ դանկու համար, փնտուղը այլեւս առնուհնացումի մէջ ազդելու չէ : Սակայն նա կ'աշխատի սովորաբար շուքի տակ ու մենակեացութենէն է որ դուրս կ'բերէ օգտակար գործը : Բայց այդ նոր ճշմարտութիւնը մի միայն իր մտածումէն ու աշխատութենէն չէ որ կը ծագի : Անոր նախադեբը կամ ինչ ինչ մասերը կամ նոյն իսկ ամբողջ կտորները կը գտնուին ցիր ու ցան իր շուրջը եւ հետուն : Ամբողջութիւնը ստեղծելով, նա անոր կուտայ, ստոյգ է, ձեւ մը որ իրենն է եւ որով իրեն

ստացուածքը ցոյց պիտի տար զայն որքա՛ն ատեն որ միայ ան այնպէս ինչպէս որ ինքը ներկայացուց :

Արդ, բոլոր աշխարհը այսօր կ'աշխատի միեւնոյն խուզարկութիւններու ետեւէն, ամենէ՛ այլազան գործաւայրերու մէջ, եւ այդ բանը միայն երէկի իրողութիւնը չէ, ինչպէս որ կը հաւատեն այդ մասին աշխահանոչակ գիտնականի մը, որ «Հիւնպօլ»ի հետեւեալ խօսքերը, զոր հաճոյք մը կը զգամ յիշելով .

«Ազգերու այս անհաւասար պայքարին միջեւ, որոնք կը մրցին ճարտարարուեստներու ասպարէզին մէջ, առանձնացումը եւ անհոգ գանդազութիւն մը անկանգնելի կերպով իրենց հետեւանք ունին ազգային հարստութեան նուազումը կամ ոչնչացումը :»

Եթէ անանմահաւորուած է այն ծանօթութիւններու տեսակը, որոնց մենք նուիրուած ենք, ասով հանգերձ ինչպէս սկզբունքները, նոյնպէս վարդապետութիւնները չեն ուշանար մեր շրջանէն ծնունդ գտնելու, մղուելու համար ուրիշ վայրերու մէջ եւ հոն ներգործելու՝ կերպարանափոխելով թէ՛ ընդհանուր գաղափարները եւ թէ՛ նոյն իսկ ընկերութիւններու բարքերը : Իբր վկայութիւն այս բանին «Պուչէր աը Փէրթ»ի բրածոյ կղակի մը գիւտը, որ վերիվայր կը շրջէ մարդուն պատմութիւնը, դարձեալ վկայութիւն՝ «Լամարք»ի եւ «Տարուին»ի ձեւափոխութեան (transformisme) երեւումը, վկայութիւն նաեւ գործուած նազեցութիւնը հիւանդ ուղեղներու ուսումնասիրութեամբ, մտածման երեւոյթները ճշգրտու համար, այն պահուն երբ «Մալըպո՛սնչէ»ներ, «Վոլթեր»ներ, «Բանթ»եր, «Ժօֆուա»ներ, «Միլ»եր, «Սքէնսէր»ներ, «Թէն»եր եւ ուրիշ շատեր չէին կրցած զայն հաստատել ճշգրտէն. վկայութիւն մանաւանդ Փասթէօնեան վարդապետութիւնը որ արդէն այնքան խորապէս քանդակած է իր նորոյնը քաղաքակրթութեան վրայ, ու այսպէս մարդս զարմացած կը մնայ ինչ ինչ հանճարներու հասողութեան առջեւ :

Ու այսօր հիւժախտի վարակումը այն ինչ ապացուցուած «Վիլլմէն»է եւ զոր «Բօխ» յետոյ կը ճշգրէր, ամեն կողմ կը ստիպէ օրէնագիրը կազմակերպել վերջնական պաշտպանողական միջոցներ, որոնց գաղափարը երբեմն յղացուած իսկ չէր :

Բայց մարդուն առողջութեան պաշտօնը, այսինքն անոր պահպանութեան, զայն պուշացնելով կամ բուժելով, մեր միակ մտահոգութիւնը չէ: Մենք կը նախամտածենք նաեւ անոր նիւթական եւ բարոյական մեծութեանը մասին, ու այս պատճառաւ է իսկ որ երկրագնդիս ամեն կէտերուն վրայ զուգահեռաբար կատարուած բոլոր ուսումնասիրութիւնները նորոգ մզում մը պտնելով մեր յարաբերութիւններու մէջ, վերին կարեւորութիւն մը կը ներկայացնեն:

Սակայն եւ այնպէս կեանքի երևոյթներու աշխարհը այնքան մութ է որ՝ առանց կորսուելու հոն մխրձելու համար, պէտք է ապահովաբար առաջնորդուիլ այնպէս ինչպէս հանքախոյզը իր լապտերով, որ կը լուսաւորէ այն գետնափորները ուր նա կ'աշխատի:

Ուժի եւ նիւթի օրէնքներն են որ կը վարեն անտարակոյս, առողջութեան ժամանակ, կենդանի էակին հաւասարակշռութեան պայմանները. բայց արգէն խիստ դժուար է, անոր մէջ, անոնց վերլուծումը ընել եւ վանդոյք բաժնել այն կնճռոտ բազազրութիւններէն որոնց ընկերացած են, մանաւանդ երբ նոր ասար մը, ինչպէս հիււանդութիւնը, կուգայ անոնց մէջ աւելնալ: Խանդարումը այդ ատեն ծայրայեղ կը լինի եւ կենդանի էակին, անոր գործարաններու, դնդերային տարրերու կենսագիտութիւնը կը շրջապատուի աղջամուղջով, որուն սահմանները ամեն օր ետ կը մղուին, առանց տակաւին տեսնելու վերջնական պայծառութիւնը: Եւ եթէ այդ բանին վրայ աւելցուի մեր դժայարանքներու անկատարութիւնը, որոնք յաճախ կը խաբուին եւ կը խաբեն, անմիջապէս պիտի իմանանք որ այն քննութեան եղանակները որոնք մենք կը գործածենք խիստ քիչ վստահելի են, շատերը ճշգրտինէ զրկուած եւ ամեն պարագայի մէջ յանձնուած անձնական գատողութեան մը դնահատութեան, հեռեւաբար ենթակայ փոփոխութեան:

Ըստ իմ կարծեաց, հարկ է մտածել՝ մեր քննութեան եղանակները փոխել՝ պտնելով ճշգրիտ գործիներ, մեթոտներ՝ այնքան ճիշդ որքան ջերմաչափը բարեխաւնութեան համար, որոնք կարենան ցոյց ածլ մեր բոլոր խոր՝ եւ մակարդակային գործարաններու ձեւը, դոյնը, մեծութիւնը, տոկոսնութիւնը եւ վերջապէս աւերումները, ինչպէս արականայ թերթիկի մը մէջէն:

Որքա՛ն սխալներ, որքա՛ն վրիպումներ, որքա՛ն

անօգուտ քայլեր պիտի խուսափուէին յաւակնոտ յառաջ-
գիմութեան մը ճամբուն մէջ, եթէ միայն պէտք ու-
նենայինք արձանագրել ակնյայտնի արդիւնքներ եւ որ-
քա՛ն ուժ պիտի կարենայինք տալ բժշկութեան գիտելու-
թեան, որ տարբեր չէ, վերջապէս, այն գիտելութենէն
որուն համար «Լայպնից»ի տիրական հանձարը կրցաւ
ըսել. «որ ամեն գիտութիւն անկից կը ծագի»:

Անհրաժեշտ է զբաղիլ նաեւ անուանակարգութիւն
(nomenclature) մը ստեղծելու, որ շատ թէ քիչ համերաշխ
ըլլայ մեր ունեցած ծանօթութիւններու հետ եւ որ ըն-
դունուի համաշխարհօրէն: Չեմ ուզեր ըսել թէ պէտք է
հիմակուընէ տալ եւ լուծել միակ լեզուի մը հարցը՝ մեր
գրութիւններու եւ բանաստեղծութիւններու համար: Տա-
կաւին այդ ժամը մօտ չէ, ուր պատրաստականութիւն
ցոյց տրուի այս կէտին վրայ համաձայնելու, նամանաւանդ
որ լեզուներու ծանօթութիւնը՝ նորասիրութեան կարգն
է եւ թէ մարդկային միաքը մեր օրերը կը համակերպի
այդ բանին յօժարակամ:

Բայց կարելի էր համաձայնիլ հիւանդագին երեւոյթ-
ներու բնական դոսակարգութեան մը վրայ, ինչ որ դիւրին
է կազմել այսօր: Այդ բանը՝ ընդունելով, շատ մը անար-
գարութիւններ պիտի դարմանուէին եւ բազմաթիւ
անարժէք իրաւասինդրութիւններ պիտի չքանային. պիտի
հաստատուէր համաձայնութիւնը կուռոյ տեղի տուող շատ
կէտերու վրայ եւ պիտի գիւրացուէր երիտասարդ սկսնակ-
ներու աշխատութիւնը, իրենց ընելիքը պարզացնելով:

Ատոնք մեծ եւ մտածել տուող խնդիրներ են որոնք,
ձեզ ներկայացնելու գործը համաժողովին նախագահին կը
վերաբերի:

Այս Ֆրանսային մէջ, որ ձեզ կը հիւրնւլալէ, յանձին
ձեր կ'ողջունեմ, օտարերկրացի Պարոններ, արեւելքի
բոլոր ազգութիւնները, համախմբուած կեանքի երեւոյթ-
ներու հոյալիւս նախանօգութեամբ:

Օրինաւոր էր որ միջազգային համաժողովի մը առաջին
նիստը Ֆրանսայի մէջ լինէր, որովհետեւ այս համախմբ-
բուններու մայր-գաղափարը բողբոջած էր Պօրտօ քաղաքը,
1865ին «ժէնիւրաք Ֆիս»ի մտածումին մէջ, որ զայն ներ-
կայացուց սա խօսքերով:

«Ձեզի կ'առաջարկեմ 1867ին, Փարիզի մէջ բոլոր

երկիրներու բոլորներուն միջազգային համաժողով մը»

Դուք էք, Պարոն օտարացի անդամներ, որ որոշեցիք թէ այդ համաժողովը երկրորդ անգամն ըլլալով Ֆրանսա պիտի լինէր, ՅՅ տարուան թափառական գոյութենէ մը վերջ, տասնըմէկ անգամ միայն աշխարհի զանազան մայրաքաղաքներուն մէջ տեղի ունենալով:

Ինչքան որ Վարիզը այս տարի ուր նա յանձնուած է ազգերու հանձարին՝ դառնալու համար «հազար պալատներու» ոստանը՝ իրենց հրաշալիքներով ու պերճութիւններով, ուր, էապէս մոգական շրջանակի մէջ, կը տեսնենք հոն Արեւելքի կեանքը, Արեւելքի մէջ, Հիւսիսի կեանքը մառախլապատ եւ ձիւնապատ հորիզոններու մէջ, ամենէ հեռու եւ անմատչելի երկիրներու կեանքը իրենց հողային եւ ճարտարապետական արտապրութիւններու մէջ եւ ուր, վերջապէս, ա՛նչ կողմէ կը յայտնուի մարդկային մտքի խորհուրդները դիւնութեան, արուեստին եւ մասձման մէջ:

Թող ինձ ներուի բարձրաձայն ըսել որ համաժողովին կազմութիւնը իմ եւ իմ աշխատակիցներուն կրճու տարուան յարատեւ ջանքերուն պէտք ունեցաւ, այդ բանը ըրած ըլլալնուս չենք զլջար՝ առաւել քան երբէք բազմութիւ գալու համար ձեր ցոյց առած փութկոտութեան եւ մեզի բերած ձեր ամեն տեսակ աշխատութիւններու արժանիքին ներկայութեան:

Ձեր ամենուն բարի գալուստ մաղթելով՝ իմ ամենէ սրտագին շնորհաւորութիւններս ձեզի կ'ուղղեմ: Սրտանց շնորհակալութիւններս կը յայտնեմ ամեն երկիրներու կազմակերպիչ յանձնախումբերուն որ հզօրապէս մեզի օգնեցին, ամբողջ Մամուլին՝ իր գործնական եւ անչափանդիր աջակցութեանը համար, համաժողովին գործօն մասնախումբին որ երբէք չթերացաւ պատասխանել իմ հրաւերներուս եւ ինձ առաւ լաւագոյն խորհուրդներ, Փարիզի Համալսարանին եւ Հանրապետական կառավարութեան, վերջապէս, որ լաւ ըմբռնեցին մեր գերին կարեւորութիւնը եւ անոր կատարման դիւրութիւնը ընծայեցին մեզ:

Փալով ինձ, սիրտս լեցուած ամենէ տաք զգացումներով, զոր երբէք ունեցած ըլլամ կեանքի մէջ, վերջացնելով այլեւս ուրիշ խօսք չեմ դաներ ըսելու, բայց եթէ կրկնելու անոնք որ առաջինն «Պույնար», այս համաժողովի ամենէ հոշալուստը

նախագահներէն մին, ձեզ կ'ուզէր. «Ձեր շնորհիւ, իմ ամբողջ կեանքս կը ստանայ իր պսակաւորումը... իմ սրտիս ամենէ նուիրական զգացումներուն կը խօսիք դուք եւ այնտեղ պիտի ապրիք մինչեւ անոր վերջին զարկը:» Պիտի աւելցնեմ. հիմա, դէպի գո'րծ, ժամանակը ստիպողական է ծագումէն ի վեր, երբէք հունձք մը այսքան առատ եւ այսքան գեղեցիկ չի ծանուցուեցաւ, գիտնանք անկից օդատուիլ եւ քաղել անկէ ամենէ արդիւնատու ցանքերը՝ զոր պաղաբերել պիտի տան մեր ապագայ սերունդները:

(Փարիզի Հանայասրակ)

Զ. Է.

1901 հոկտ. 19

2

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

(L'hygiène Moderne)

(Իսասխուսարիւն Պրօֆեսոր Ժիւլ Կուրուսնի)

Կլօզ Բէրնարի «Ներածութիւն Փարձառական Բժշկութեան» գիրքը սկսում է այս խօսքերով. «Պահպանել առողջութիւնը եւ բուժել հիւանդութիւնները, ահաւասիկ այն հարցը, որ դրած է բժշկութիւնը իր ծագումից ի վեր եւ որի գիտական լուծումը գեո փնտռում է»: Ուրիշ խօսքով, բժշկական գիտութիւնը, իւր առաջադրած նպատակի համաձայն, պարունակում է երկու մեծ ճիւղեր, առողջապահութիւնը եւ ախտաբանութիւնը: Ճիւղեր, որոնք պէտք է իրարու փոխադարձ յենարանը կազմեն, բայց ուսումնասիրուեն եւ ուսուցուեն անջատ կերպով:

Մարդկային առողջութեան պահպանումը անտեսազեւաին ամենակարեւոր մտազբազումներից մէկն է: Մարդը ընկերական մի գանձ է, առաջնակարգ օգտակարութիւն ունեցող մի գրամագլուխ, որ, անդադար ու վատնվաւոր յարձակումների դէմ, պաշտպանուելու կարիքն ունի: Չկայ մի որ եւ է ընկերական հարց, որ առողջապահութեան պրօբլէմին յենուած չլինի: Դուք գիտէք, օրինակի համար, թէ ինչպէս անհանդատութիւնների պատճառ դառաւ Ֆրանսիայի ազգաբնակչութեան նուազման անվիճելի իրողութիւնը: Մենք չըջապատուած ենք բազմամոտեւոյ ազգե-

բով : Մօտաւոր սպազայում մեզ սպառնում է խաղաղութեամբ նուաճուելու , ինչպէս նաեւ , մեր ցեղի Փրանսիական հողի վրայ փոքրամասնութիւն կազմելու վտանգը : Ի՞նչպէս դարմանել ժողովրդական այս նուազումը : Խնդիրը ստիպողական կարեւորութիւն ունի եւ անհրաժեշտ է ի նկատի առնել : Ընդունում եմ , որ այդ հարցը լուծելում սխալուեցան : Ուզեցին ծննդականութիւնը աւելացնել , քաղաքական միջոցների դիմեցին , կազմեցին եւ առաջարկեցին մասնաւոր օրէնքներ : Սխալը անհեթեթ էր : Կարելի չէ ազգի ծննդաբերութիւնը աւելացնել : Մի բնական օրէնք կայ , որը բրբէք չի յաջողուի բարեփոխել : Որքան մի ժողովուրդը քաղաքակրթուած է , որքան նա բարձրացած է վայելքների եւ պէտքերի աստիճանների վրայ , այնքան իւր ծննդականութիւնը նուազում է : Մենք , Փրանսիայում , աստիճանների դազաթիւն ենք : Մի վտանգաւոր ցնորասխոհութիւն (ուտօպի) է , կամենալ աւելացնել Փրանսիական ծնունդները :

Դարմանք բոլորովին սարբեր է . նա դառնում է հէնց չարիքում : Պէտք է այդ փնտռել , խնայէս , մեր քաղաքակրթութեան զարգացման մէջ : Իմ կարծիքս է թէ Պրանսիայում բաւարար կերպով են ծնւում , ընդհակառակը՝ չափ մեղմում :

Մեր կլիմայի եւ հողի գերազանցութիւնը , մեր հարստութիւնը , մեր շուայ կամ միայն բարեկեցիկ (երջանիկ) լինելու սովորութիւնները , մեր մեզ համար ստեղծած բազմատեսակ կարիքները , պէտք էր որ ունենային մի անմիջական հետեւանք . այսինքն , պէտք էր որ մենք մեռնէինք նուազ , քան մեր զրացիները . հաւասարակշուութիւնը այսպէս պիտի հաստատուէր : Արդ , մահացիութեան այս նուազումը կարելի է միայն առողջապահութիւնից խնդրել , անհատական եւ ընկերական առողջապահութիւնից : Կեդրոնական իշխանութիւնից սահմանուած օրէնքները , քաղաքապետների որոշումները , իւրաքանչիւր մասնաւոր անձի սովորութիւններն իսկ , պէտք է որ շեղուէին դէպի այս նուիրական ճիգը . «խուսափել՝ խուսափելի հիւանդութիւններից» , աւելացնելու այսպէս ցեղի ոյժը , — ծննդականութիւնը : Այն օրը , երբ այս նպատակը իրագործուած պիտի լինի , ընտանիքներու ծննդականութիւնը գեռ էլի կը պահպանի , սակայն ազդարնակութեան աճումը մի իրազործուած իրողութիւն կը լինի : Լաւ հասկացէք այս խօսքը . «խուսափելի հիւանդութիւնները» : Փանի որ զրանք բուլորն էլ խուսափելի են , ուրեմն , հենց զրա մէջն էլ կայանում է առողջաբանների գերը : Միւս կողմից էլ , յաճախ աւելի դիւրին է պահպանել հարիւր գոյութիւններ մի հիւանդութիւնից , քան թէ բուժել մինը նրանցից , որ բռնուած են այդ հիւանդութեամբ : Դարձեալ , սպաքինու-

Թիւնը, դժբաղդաբար, առողջութեան վերադառնալու նախաբանը չէ. շնասը եւ արտաւորութիւնը յաճախ վերջնական են. ընկերական դրամազուեւը խոտուած է, նուազած միանգամ ընդ միշտ: Աւելի լաւ է առջեւը առնել, քան թէ բուժել: Այսպէս ըմբռնուած առողջապահութիւնը միթէ՞ ձեզ չէ թուում բժշկական գիտութիւնների ամենակարեւորը, ինչպէս նաեւ ընկերական ուսումնասիրութիւնների ամենից գլխաւորը:

Մի քանի օրինակներ, որոշ թուեր յստակ կերպով կը պարզեն ժամանակակից առողջապահութեան այս առաջնակարգ դերը: Ի նկատի առնենք ներկայ աղետներու ամենահարկու նախճիրները, այսինքն հիւժախտը (տիւբերկուլոզ): Այս ախտը անշուշտ բուժելի է եւ ակապքանութիւնը անկարող չէ նրա դէմ: Մօտ ապագան պիտի տեսնէ թերեւս նրա յատուկ դեղի գիւտը: Մէկ կողմը թողնենք հիւժախտաւորներին, որ բուժուեն, որոշենք միայն դժբաղդների թիւը, որոնք տարեց տարի զոհ են գնում: Հիւժախտը 150,000 մահ է պատճառում իւրաքանչէր տարի Թրանսիայում. բոլոր մահացիութեան վիճակագրութիւնների մէջ մէկ հինգերորդն է հաշուում: Այս թիւը, անասրակոյս, իրականից շատ նուազ է, որովհետեւ ընտանիքները անողորելի զգուանք են զգում դէպի թոքախտը, հետեւաբար եւ դժուարանում են մահերը նրա անուշով յայտարարելու: Փարիզում դրանց տարեկան միջին թիւն է 12,000. Լիօնում մտաւորապէս 2,000: Այս թիւերը պերճախօս են: Աւելի եւս պերճախօս պիտի լինեն, եթէ մտածենք, որ նրա զոհերի 2/3ը ընկերութեան ամենսղարաւոր ոյժերիցն են, այրեր եւ կիներ 20-30 տարեկան: Ահաւասի՛ղ այն կորուսաները, որ զգում է մեր երկիրը թոքախտի չարիքից: Աւելացնենք այս սոսկալի վիճակագրութեան վրայ մտաւորապէս այն բոլոր տկարացածները, շատ թէ քիչ բուժուած թոք սխտաւորները, որոնք խնամքի ուժով, երկար ստիներ կը քաշկուտեն իրանց թշուառ դոյութիւնը: Երեւալայտ՞ում էք ընկերական այս յետ ընկած արտէքների անհաշուելի թիւը: Իհու աւելի սոսկալին կայ, հիւանդութիւնը ժառանգական է, ոչ միայն սերմով, այլ եւ հողով: Ամեն թոքախտաւորի զուակ ծնում է թոքախտին ընդունակ, բոլորովին պատրաստուած ու մշակուած հայթայթելու համար, դիպուածալսն առաջին ցանքին իսկ, բասիլներու մի առատ հուռնք: Մի երկիր, ուր թոքախտը չէ նուազում, հանդիսատես է լինում իւր յեղի ընդունակութիւնների յաւելմանը դէպի այդ հիւանդութիւնը, մտահոգութիւն պատճառող համեմատութիւնների:

Վտանգը անարկու է: Բժշկութիւնը չէ կարող ջնջել այդ չարիքը. իր դերը մարդասիրական է միայն: Նա

մխրթարում, նոյն իսկ բժշկում է թոքախտաւորին, թէ եւ չէ կարող վարակումին ակը ցամաքեցնել: Առողջապահութիւնը, ընդհակառակը, պէտք է այս իրաւացի փառասիրութիւնը ունենայ: Մի կարգ միջոցներով, որոնք պէտք է ձեզ թուեմ, առողջապահութիւնը կարող է զբաւալէս նուազեցնել թոքախտաւորների թիւը, ազատելով տարեկան 150,000 զոհերի երկու երրորդ մասը: Առողջապահութիւնը պէտք է յուսայ նոյն իսկ անհետացնել, շատ թէ քիչ հեռաւոր ապագայում թոքախտը երկիւս երեւոյց:

Ճանաչում ենք այսօր կատարելապէս հիւժախտի պատճառները: Ինչպէս միշտ, կայ սերը եւ հողը: Սերմը առանձնացած է, մշակուած եւ ներարկուած. այս կօսի բասիլն է: Եւ գտնուում է թոքախտաւորների խուխին եւ նրանց միջոցով, ամէն բանի մէջ, որ նրանք վարակում են. դարձեալ այն կաթի, կարագի, պանիրի մէջ, որոնք առնուում են հիւժախտաւոր կովերից եւ նոյն իսկ հիւժախտաւոր եզան մսի մէջ: Այստեղ գլխաւոր աղբիւրներն են յիշում միայն:

Պէտք է ուրեմն առանձնացնել հիւժախտաւորներին, հականեխել նոցա բնական տեղերը եւ արդիւել նրանց հասարակաց վայրերում թքելը: Միթէ՞ սոսկալն բան՝ չէ տեսնել մեր հիւանդանոցներում թոքախտաւորներ, որ կ'արտաթորեն միլիօնաւոր բասիլներ՝ բուժելի հիւանդութիւններից ազաքինողների շուրջը, տկարակազմների մէջ, որոնք դեռ ազատ են թոքախտից: Ի՞նչ արդիւնք են սպասում խցակեաց լինել հարկադրելով թոքախտաւորներին մի բան որ յատկացուած էր ծաղկախտաւորներին, «գիֆիրիտ»աւորներին «սկարլատին»աւորներին, եւ առհասարակ, առանձնացումից: Միթէ՞ ամօթ չէ մտածել թէ չկայ ցարդ որ եւ է պարտականութիւն բժշկի վրայ յայտարարելու քաղաքապետութեան մէջ իւր յաճախորդների շրջանում դիտած հիւժախտի գոյութիւնը: Այն տունը, ուր մի թոքախտաւոր է մեռած, առանց որ եւ է հակա-նեխութեան, անմիջապէս վարձուում է: Լիօնում թոքախտից մեռնողների թիւը երեք անգամ աւելի է՝ գործադրուած հականեխութիւններից, որոնցից, գրեթէ բոլորն էլ կատարւած են նուազ վտանգաւոր հիւանդութիւնների համար: Ի՞նչ է սպասում սրահներ, եթէ ոչ հիւժախտաւորների հիւանդանոցներ ստեղծելուց: Ի՞նչ է սպասում հիւանդութիւնը յայտարարելու եւ հականեխման օրէնքի բարեփոխումից: Ե՞րբ ուրեմն, վերջապէս, դիակիզութիւնը պարտաստորիչ պիտի դառնայ, գոնէ վարակիչ դիակների համար:

Մեզ չեն պակսի միջոցներ հիւժախտի դէմ պաշտպանուելու համար: — Ստեղծել ամբողջ երկրի մէջ մսերի վրայ լուրջ քննութիւն, ոչ միայն մեծ սպանդանոցների, այլ եւ փոքր քանակութեամբ, նոյն իսկ մասնաւոր աների

մէջ, մորթուածները վրայ. հիմնել փոքիկ տուրքով արկղիկ, որ տուգանքի ենթարկելով հիւժախտաւոր կենդանու աէրը, նրան հետու պիտի պահէր խարդախելու փորձութիւնից, առանձնացնել հորթերը, քանի որ նրանք հիւժախտաւոր կը դառնան մեծանալուց յետոյ վարակու մով. այրել հիւժախտաւոր դիակները. պարտաւոր դարձնել հիւժախտայինի (տիւքէրկիւլին) փորձը այն բոլոր վաճառելի արջառներին վրայ, որոնք սահմանաչուխը կ'անցնին, ինչպէս նաեւ կաթնատու կովերի վրայ. անգթօրէն պահել ամեն կասկածելի կենդանի եւ հիմնել շիճուկային ախտագննութիւն:— Կենդանաբոյժները արդէն գովելի ջանքեր են արած այս ուղղութեամբ, շայց չունին իրանց տրամադրութեան տակ բաւականաչափ պաշտպան օրէնքներ: Այս վերջինների բարեփոխութեամբ պէտք է սկսել:

Ահաւասիկ թէ ինչպէս պէտք է ջնջել սերմը: Կարելի է կուռել հողի նախաարամագրութեան դէմ: Անտարակոյս, խիստ ազդու կերպով: Բժիշկը, իւր պաշտօնի ճշմարիտ բարձրութեան վրայ գտնուող բժիշկը, առողջաբանի օգնութեամբ պէտք է արգելէ հիւժախտաւորի կամ հիւժախտին տրամապիրների ամուսնութիւնը: Եթէ ամուսնութիւնը արդէն կատարուած է, պէտք է հիւժախտաւորի զաւակը հեռացնել իւր ծնողներից, ուղարկել որ եւ է գիւղ, հետու պահել սերմից եւ դնել նպաստաւոր պայմանները մէջ: Թերեւս այդ միջոցները խիստ թուին, բայց երբէ՛ք չեն դադարիլ մեր տրամադրած միջոցներից լաւագոյնները լինելուց, ժառանգական նախաարամագրութիւնների դէմ կուռելու համար:

Հիւժախտը կարող է զարգանալ ժառանգականութիւնից չը տկարացած հողի վրայ եւս: Այդ միջոցին նախատրամագրութիւնը առաջ կը գայ աւելի ընդհանուր պատճառներից: Աղքատութիւնը, անբաւարար սնունդը, բնակավայրի անմաքրութիւնը, ալիօլամոլութիւնը նպաստում են հիւժախտի ճարակման: Ընկերական կանխատես օրէնքները, աղտոտ տների հակառիտումը, ալիօլի դէմ պայքարը առաջին կարգի արգիլիչ միջոցներն են հիւժախտի վարակումի դէմ: Դրանք խիստ անտեսուած են Յրանսիայում: Գիտէ՞ք որ Անգլիայում կէս առ կէս նուազած է հիւժախտից մեռնողների թիւը, գրեթէ, 35 տարուայ ընթացքում 1860—1895. իւրաքանչիւր միլիօն բնակչութեան վրայ 2679ից իջած է 1463ի: Ես հաւատում եմ պրօֆեսոր Բրուլարդէլի * հետ, որ անմաքուր տների համար որոշուած անդիլական սքանչելի օրէնքը մեծ դեր է կատարել այս ստաջագիմութեան մէջ: Գիտէ՞ք, որ Փարիզում հիւանդանոց գիմոլների հարիւրից 98ը ալիօլամոլներ են: Արդ,

* Յայնի պրօֆ. Փարիզի համալսարանի բժշկական ճիւղի:

գործաւորի ալիօլամոլութեան դէմ կոռուելու պայքարը լաւ ուղիի վրայ է գրուած . . . Գերմանիայում: Կրկնում եմ, պայքարի միջոցները բազմաթիւ են եւ ազդու. բաւական է «կամենալ եւ առնել»: Առողջաբանի պարտքն է ծանօթացնել եւ պահանջել նրանց գործադրումը: Հասարակաց իշխանութիւնները այս առաջադիմութեան ուղղին մէջ մտած կը թուին: Այս տարի իսկ 40 անդամներից յանձնախումբ է կազմուած, ուսումնասիրելու համար հիւժախտին դէմ կոռուելու միջոցները: Յուսամք որ այդ յանձնախումբը իր վրայ խօսիլ կը տայ:

Կարճ խօսքով, հիւժախտը մի մեծ, բայց խուռափելի, աղէտ է: Կոռուելով նրա դէմ, առողջաբանները պիտի կարողանային իւրաքանչիւր տարի պահպանել աւելի գոյութիւններ, որքան չպիտի արտադրէին ծննդականութիւնը աւելցնելու գործը եւ երեւակայական օրէնքները:

Ես միայն հիւժախտը օրինակ վերցրի, սրովհետեւ դա կը կազմէ ամենավերահաս վտանգը: Ուրիշ բազմաթիւ հիւանդութիւններ եւս հաւասարապէս մահացու եւ սարսափելի են:

Նկատենք կարմրախտը (Րուժօլ): Նրա դէմ կոռուող աստաբուժութիւնը խիստ քիչ բանի է վերածուած: Կարմրախտը բուժուում է ինքնաբերաբար, ի բաց սուռալ կնճռոտ պարագաները: Այս վերջինների դէմ բժիշկը գրեթէ անկարող է: Դոքա էին, որ անցեալ տարի շնչափողային թոքատապով 900 երախաներ սպանեցին Փարիզում: Բոլոր այս մահերը տեղի ունեցան, գրեթէ, հիւանդանոցում. կարմրախտը հարուստ ընտանիքներում թեթեւ էր: Առողջաբանը ձեռք պիտի բռնէ, թէ ինչպէս կարելի է մահացու կնճռոտութիւնների առաջնառնել կարմրախտաւորներին բաժանելով փոքրիկ սրահների մէջ, ջնջելով շնչափողային թոքատապի միկրոպները, վարակուած վայրերի կանոնաւոր հակահիւսմանով:

Եւ Մադիլախսը: Ո՛ր պիտի ամօթ 19րդ դարու վերջը արձանագրուած տեսնել ծաղկախտի համաճարակը մեր երկրում: 1900ին, միայն Լիօնում հազարներով կրկնուած են վարակումներ եւ հարիւրներով մահեր: Յուցահանդէսում, գերմանական վիճակագրութիւններից երեւում էր՝ 1874ից ի վեր մահերի անհամեմատ նուազութիւնը Գերմանիայում, ուր պատուաստը եւ վերապատուաստումը պարտաւորիչ են, ուրիշ երկիրների բաղդատմամբ: 1872ին 100,000 բնակչի վրայ՝ 262,4 էր: 1874ին օրէնք կը հաստատուէ: 1874ից յետոյ համեմատութիւնը 3,6ի կ'իջնի. 1886ին 1ից վար էր, եւ 1897ին իջած է 0,02ի: Աւստրիայում, ուր պատուաստումը պարտաւորիչ չէ, թէեւ նախապատուած մի գրուածութիւն է նկատուած, ծաղկախտով մեռածների թիւը 100,000 բնակչի վրայ 60, 81, 94 էր՝ զեռ 1882, 1885, 1888ը թուականներում: Բէլըիւնում, ծաղկախտի մահացիւթիւնը բարձակապէս ոչինչ է: Լիօնում 1900ին հասած է 60 առ

100,000) : Յուդայահայերն այցելող օտար բժիշկներին շատերը առիթ չունենալով իրանց երկրում նկատել ծաղկախտը, ճամբորդեցին մինչև Լիօն, տեսնելու համար, թէ ինչպէս եւ առանձնացնում եմ իմ ծառայութեան տակ դաժնուած հիւանդներին : Որքան քիչ փայփայիչ այցելութիւն :

Նկատելով բազմաթիւ դաւաղների մեկնումը եւ անօգուտ կեանքի մասնուած, կուրացած, հազար կերպով հաշմած, տկար ապաքինողները, թուելով այն ամեն կուրուստները, որոնց ենթարկուեց մեր երկիրը ծաղկախտի այս համաճարակին, եւ ինչ յաճախ հարցրած եմ, թէ ինչպէս տակաւին կարող է, բոլորովին խուսափելի մի այսպիսի հիւանդութիւն, գործել այդքան նախճիրների. ինչո՞ւ համար օրէնսդիրը մեզ այդ օրինակ փորձերի է ենթարկում, հակառակ գործնականի, հակառակ մեր գրացիների մեզ սուած դասերի : Մի՞թէ այդքան դժուար է քուէարկել գերմանական օրէնքի մէկ նմուշը : Մեր պատուաւորի յանձնախմբերը անկարող են : Անորոշ կերպով խորհրդակցութեան կանչուած, չունին որ եւ է իրաւունք կամենալու եւ չեն կրում որ եւ է վաւերացում : Ո՞րպիսի անօգուտ կազմակերպութիւն : Այդքան բարձր հեղինակութիւն ունեցող մարմիններ ո՞չ թէ խորհրդատուի դեր պիտի կատարեն, այլ, ստիպողաբար, գործնական : Ընկերական առողջապահութիւնը պէտք է խօսի, այս պարագայում, արական ճայնով :

Փանսասենդը (Ֆիէվրը տիֆօիս) խուսափելի է խմիլի ջրերի առողջապահութեամբ : Այդ ջնջելու համար բուսական է, բայց անպատճառ, որ քաղաքայնութիւնները խաօրէն հսկեն ջրերի վրայ : Միջոցը անվերիպելի է, գիտնականապէս եւ փորձառապէս ապացուցուած : Եւրոպական որ եւ է քաղաքի առողջապահական սահմանը տրուած է նրա ժանտախտաւորների թուով : Այս տեղ եւս մեր վիճակագրութիւնների քննութիւնը, գերմանականի հետ, ի նպաստ մեզ չէ եզրակացնում :

Ջերմը (մալարիա) պիտի անհետանայ, քանի որ առողջաբանը հոյց է սուած չարիքի աղբիւրը, այսինքն ճահիճը, մեհիճը, արիւնակիւնսիկը (էմատոզօէր) :

Միջապային առողջապահական ոստիկանութեան օրէնքները մեզ պահպանում են ժանտախտից, խօլէրայից : 1886ին, խօլէրայի Ֆրանսիայում 120,000 զոհեր տարաւ. իր վերջին երեւումը խիստ թեթեւ եղաւ : 14րդ դարում, «Կապոյտ ժանտախտ»ը 25 միլիօն մահ պատճառեց Եւրոպայում եւ 23 միլիօն Ասիայում : Եւրոպան գրեթէ դատարկուեց : Այժմ եւրոպական ժանտախտի կեդրոնները բոլորովին սահմանափակ են : Ո՞րպիսի առաջգիմութիւն :

Վարակիչ հիւանդութիւնների հարցը մէկ կողմը թողնենք : Հիւճախտի նախատրամադրութեան առթիւ, ալկոլիզի վրայ արդէն խօսեցի : Ի՞նչ պէտք է ասեմ ձեզ շի-

կուցայինների (cirrhétique), ոճագործների եւ ժառանգական ալյաւերուածների մասին : Ալիօլի աղէտաւոր դերը չափազանց մեծ է մեր ընկերական վիճակի մէջ եւ անկարելի է մի քանի խօսքով բացատրել : Դա կենսական կարեւորութիւն ունեցող մի խնդիր է, որը իր վրայ պիտի հրաւիրէ առողջաբանի ուշադրութիւնը եւ օրէնսդրին հաստատակամութիւնը : Պէտք է որ համառօտեմ խօսքս : Մասնանիշ անեմ ձեզ, գարձեալ, ապառողջ ճարտարագործութիւնների եւ նրանց գործածած գործաւորների առողջութիւնը պահպանելու միջոցները, ինչպէս նաեւ սննդական խարդախութեանց խուզարկութիւնների ուսումնասիրութիւնը :

Գիտութեան յառաջագիմութեամբ ձեռք բերուած առողջապահութիւնը, ընկերական կատարելագործութեան վերջին արտայայտութիւնն է : Կարող եմ օրինակներս անհունօրէն շարունակել : Կանգ կ'առնեմ եւ կը համառօտեմ ընկերական սնտեսագիտութեան մէջ ախտաբուժական բժշկութիւնը անվիճելի խոչոր դեր կը կատարէ, բայց եւ այնպէս, նուազ կարեւոր քան առողջապահութեան գերը, Բժշկութիւնը կրակը կը մեղմէ, մինչդեռ առողջապահութիւնը հրդեհը կ'արդէլէ : Գարձեալ, առողջապահութիւնը յնուում է գիտական ստոյգ սկզբունքների վրայ եւ գործում է ապահով ճանապարհով : Բժշկութիւնը ունի իւր հակառակորդները, մինչ առողջապահութիւնը ցարդ ո՛չ մի բողոքի տեղի չէ տուած : Ծնործիւ առողջապահութեան, մենք իզէալ առողջութեան, բարեկեցութեան եւ վայելումի կը ձգտենք, որ մեր նախնիքները երբէք չէին համարձակած կանխումտածել եւ որով մենք այսօր մօտալուտ իրականացումը կը դատենք :

Համաշխարհային ցուցահանդէսը, որ այնքան հոյակապօրէն պսակեց 19րդ դարու վախճանը, բացուեցաւ պաշտօնական բանախօսութիւնների մէջ, այս յոյսը մասնանշելով : Լսեցէք հետեւեալ մարդարէական խօսքերը.

«Այն միջոցին, երբ կեանքի ոյժն ու կորովը անհունապէս աճում է, մահը ըստ ինքեան յետ կը մղուի մարդկային կեանքի յաղթական գնացքի առջեւ : Մարդկութեան անզուգական բարերարի, Պաստէօրի, հանճարը՝ որի փառքը տակաւին չի կրում որ եւ է սառուեր, կը հարիւրապատկէ բժշկութեան եւ վերաբուժութեան ոյժը : Չարիքը, իւր ծագման օրը սանձարհարուած եւ առանձնաշած, տեղի կը տայ, եւ, ահաւասիկ, երեւում է ապագայ հորիզոնի վրայ այն երջանիկ վայրկեանը, երբ համաճարակները, որոնք քաղաքներում նախճիրներ էին գործում ու ապականում ժողովրդները, պիտի լինեն միայն սարսուցցոյիչ յիշատակներ եւ իբր հին սուուրց առասպելներ :»

Լիօն, 1901 հոկտ. 10-ին

Պ. Ա.

ԱՆՖՅՈՆՍ-ՄԻՆ ԷՏՈՒԱՌ

Ֆրանսայի գիտութեան աշխարհի ամենէ փառապանծ գէօքերէն մին, Ալֆօնս-Միլն Էտուառ, կը թողուր՝ գրեթէ մէկ տարի առաջ, այս կեանքը՝ ապրելու համար զինքը ճանչցողներու սրտին մէջ եւ գիտութեան՝ ուր թողուց կրկին եւ տեւական գրոշմ մը:

Իր երիտասարդ հասակէն մեծ ձգտում եւ ընդունակութիւն ցոյց կուտար գէպի մարդկային կազմաբանութիւնը եւ բնախօսութիւնը ու այդ ուսման համար կը յաճախէր բժշկական դպրոցը, որուն առած ծանօթութիւնները սակայն, վերջ ի վերջոյ, միմիայն լրացուցիչ մաս մը պիտի ըլլային իր խիստ լայն գիտական հայեցողութիւններուն՝ կենդանական աշխարհին վրայ: Ախտաբանութիւնը զինքը հազիւ կը հետաքրքրէր ու զայն կը սորվէր քիզ մը միայն կարենալ գրելու համար, թէզ մը՝ որ սակայն այնքան նշանաւոր եղաւ իր ընտրած նիւթին (ոսկրապահմութեան նպաստող սնունդներու) կատարեալ ուսումնասիրութեամբը:

1860ին, 25 տարեկան, ու 1861ին գիտութեանց ասօքթէօն կը գառնայ, 1864ին գեղադործական բարձրագոյն վարժարանի ակադէմիոնը կը յաջողի անցնել, ինչ որ իրեն թոյլ տուաւ, յաջորդ տարի, միեւնոյն վարժարանին կենդանաբանութեան բրոֆէսէօր նշանակուիլ:

Իր բազմաթիւ աշխատութիւնները ընդհանուր կենդանաբանութեան, ստնաւորներու կազմաբանութեան եւ հնէաբանութեան (paléontologie) շուրջը դարձած են: Տղայ հասակէն՝ իր հօրը մօտ՝ այդ բնապատմական ճիւղերուն վրայ արդէն ծանօթութիւններ ամբարած էր: Իր պատանեկական խաղերն էին բրածոներու մանր կտորուանքներ իրարու միացնելով ոսկրային խոշոր կտորներ շինել եւ յաճախ ամբողջ կմախքներ: Այդ ձեռական աշխատութիւնները նախաբանը եղան Էտուառի թեթեւաշարժութեան, համբերատար ոգիին եւ յատկանշական ձեւերու գիտելութեան մէջ որամտութեան, յասկութիւններ՝ զօր իր

ամբողջ կեանքին մէջ զարգացուց : Իր կորովամտութիւնը ոչինչով կ'ընկրկէր. իր ձեռքով իսկ շինած էր կենդանա- կան աւազան մը, ուր գանուած ջուրը խիստ լաւ կերպով օգին հետ կը հաղորդակցէր, առանց վերանորոգուելու, ուր երկար տարիներ կը պահուէին ողջաւողջ, ամեն տեսակ կենդանիներ :

Մինչ Էստուառի երբեմնի երկրաբանական խուզարկու- թիւններուն անձամբ ներկայ գտնուող եւ անոր բնութեան ու երկրին զանազան խաւերուն կարելի կազմութեանը վրայ տուած պերճախօս բացատրութիւններէն բոլորովին յափշտակուած՝ կենդանի տպաւորութեան մը տակ, գիտ- նական մը՝ անոր մահուան առթիւ սա գեղեցիկ խօսքերը կ'արտասանէր. «Կը զգայի այն ատեն, թէ ո՞րքան նոր գեղեցկութիւններ կը զգենու բնութիւնը, երբ գիտու- թիւնը մեզի գայն կը բացատրէ եւ թէ ի՞նչպէս բարձր քարաժայռ մը (falaise), բացի իր նկարագրելութիւնէն, որ զգայարանքներուն կը խօսի, կը խօսի դարձեալ մտքին՝ յայտնելով անհուն տեւականութիւնը երկրաբանական շրջաններու եւ այլազան ժայռերու կազմակերպութեան մեքենականութիւնը :»

Իր հաւաքած բրածոներու նմուշներու օգնութեամբ յաջողեցաւ շատ մը երկրաբանական աշխատութիւններ պատրաստել, ու իր գործերու ամենէ էական նշանակու- թիւն ունեցողներէն մէկն եղաւ բազմաթիւ բրածոյ թըռ- չուններու վրայ իր գիտը եւ գասակարգութիւնը :

1868ին Պոռտէնի մրցանակին՝ մրցումի գրած դժուար նիւթը որ միեւնոյն ատեն ընդհանուր կենդանաբանութեան եւ երկրաբանութեան կը պատկանէր (բազդատական ուսում- նասիրութիւն Չճրդ հարաւային զուգահեռականին հարաւի կողմը զետեղուած զանազան երկրային մասերու կենդա- նիներուն եւ ծաղիկներուն), աւելի կ'ընդարձակէ, մանա- ւանդ կենդանաբանութեան տեսակէտով՝ ուսումնասիրելով երկրիս երեսին վրայ կենդանիներու ցրուումը, այնպէս որ իր հեղինակաւոր տեղեկագրութեան բազմաթիւ պատկեր- ներով զարդարուած հատորը՝ 1873ին յաջութեամբ կը պը- սակուէր : Այդ թուականէն ան կ'ընարուի գիտութեանց ակադեմիայի կազմաբանական եւ կենդանաբանական ճիւղին անդամ եւ 1876ին Միւզէօմի մէջ բրօֆէսէօս :

Իր յաջողութիւններու հետ կ'աւելնար նաեւ իր ուսումնասիրութիւնները կատարելագործելու եռանդը: Կենդանիներու երկրիս վրայ բաժանուած ընդարձակ խնդիրը զայն խիստ հետաշնորհ կը սանի: Իր միակ ցաւն էր որ զանոնք կը տեսնէր ու կը բացատրէր միայն ցամաքին վրայ եւ իր ծանօթութիւնները կենդանական ամբողջ գիտութեան մէջ մէկ հինգերորդ մը միայն կը կազմէին: Հարկը կը զգար ծովերու եւ ովկիսնոսներու խորքը թափանցել եւ փնտսել այդ կեանքին կարելիութիւնները յաւիտենական ազլամուղջներու մէջ եւ հարիւրաւոր մթնոլորտի ահարկու ճնշումներու տակ: Հակառակ իր փափկասուն կազմուածքին եւ հակառակ իր ծովի օդէն հիւանդանալու արամադրութեանը՝ ան չի վարանիր երկար եւ դժւարատար ծովային ճամբորդութիւններ ընել 1880ին եւ 1883ին Թալիսման եւ Թուվայէօս նաւերով: Ու իր բարոյական հորովը այնքան կը խոչորնայ՝ որքան նկատի առնենք այն ծանր չարչարանքներու սակը՝ որով ձեռք կը բերէր այդ հսկայ գիտնականը տարօրինակ կենդանականութեան մը գոյութեան գիւտը, զոր կը ճանչնանք ու կը հիանանք:

Աշխարհագրական ընկերութիւնը հիացմամբ եւ երախտագրութեամբ վարձատրեց 1884ին այդ մեծ խուզարկուն, անոր նուիրելով իր սակեայ մեծ չքանչանը: 1885ին էր դարձեալ՝ որ բժշկական ակադեմիային անդամ կ'ընտրուէր եւ 1892էն մինչեւ իր մահը բնապատմական Միզէօմի տնօրինութիւնը իրեն կը յանձնուէր:

Բուսաբանական պարտէզին կենդանիները իր ջանքերուն շնորհիւ չափազանց բազմացան եւ իր պարզած արտասովոր գործունէութիւնը սպառեց իր ուժերը վերջապէս ու մահը վրայ հասաւ երբ հազիւ գիտութեան ակադեմիայէն միաձայնութեամբ քարտուղար կ'ընտրուէր, իր մտքի ամբողջ պայծառութեանը եւ բեղունութեանը մէջ:

ԳԻՏԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ ԵՒ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓՍՐԻԶԻ ԳԻՏԱԿԱՆ ԱԿՍԴԵՄԻԱՆ

1. Բնախօսական Գիտաբանություն. — Պ. Փուշէ վերջերս անթիւնուանով (antimoine-ծարրաքար) պատահած թուճաւորման մը վրայ եղած վիճաբանութիւններէն մընաւոր, փորձեր կատարած է շուներու եւ նապաստակներու վրայ՝ թէ ի՞նչպէս եւ ո՞ր նպաստաւոր հող կը գտնէ այդ թոյնը կենդանական գործարանաւորութեան մէջ, ու հետեւեալ անդիկութիւնները հազորգած է ակադեմիային.

Թէ անթիւնուանի թուճաւորիչ ուժը եւ գործարանական ներգործականութիւնը (localisation) կը յայտնուին այն աստիճաններ, համեմատաբար առաւելիքին (arsenic-զաւելի), մեծ քանակութեամբ ծծուի. — Թէ անթիւնուանի ընտրած գործարանները (localisation) խիստ տարբեր են առաւելիքէն.

— Թէ՛ եթէ՛ այս երկու տարրերը խառնուած ըլլան՝ անթիւնուանը ո՛չ միայն առաւելիքին թուճաւորիչ յատկութիւնը չի նուազեցնէր, այլև կը թուի թէ զայն կ'աւելցնէ:

Իրօք, առաւելիքի փոքրիկ քանակութեան մը յաւելմամբ, անթիւնուանը աւելի կը փութացնէ մորթային եւ ջղային կազմալուծումը եւ ստամոքս-աղիքային արկածներ կը պատճառէ: Սնթիւնուան դարձեալ, այս պահուն, միեւնոյն անշական ներգործութիւնն ունի: Ուղեղը, ծուծը (moelle), զնդերները, լեարդը առաւելիք կը պարունակեն եւ ոչ անթիւնուան: Ոսկորները երկու տարրերու հաքեր ցոյց կուտան: Մորթը եւ մաղերը բաւական արտաւելիք եւ մեծ քանակութեամբ անթիւնուան կը պարունակեն: Մարսողական խողովակը, ընդհակառակը, ամենէ խոշոր անթիւնուանի քանակութիւնը կը ներփակէ եւ առաւելիք քիչ: Սակայն ուրիշ գործօն գեղային նիւթի մը գործածութիւնը, այսինքն պոտիւր սը փօքասիտի (bromure de potassium), կը թուի զգալի կերպով բարեփոխելը թէ թուճաւորման ախտային նշանաբանութիւնը (symptomatologie) եւ թէ թուճաւորիչ տարրերու ներգործութեան ենթակայ վայրերը:

2. Ախտաբանական Բնախօսություն. — Լանըլօնի, Առչաու եւ Կայետա ուշագրութիւն դարձնելով բարեխառնութեան հիւժախտին վրայ առաջ բերելիք բարեխառնութեանը վրայ, հետեւեալ եզրակացութիւններուն յանգած են:

Ոչ չափաւոր ցուրտը եւ ոչ ալ թեթեւ օդի փոփոխութիւնները զգալի կերպով կը ներգործեն հիւժախտին վրայ: Ընդհակառակը տաքութեան ուժգին եւ յանկարծական փոփոխութիւնները (թէ եւ այս փորձերը կատարուած են հընդկախողերու վրայ) խիստ մեծապէս կ'օգնեն ախտին յառաջանալուն:

ԸՆԴՉ. ԼՈՒՐԵՐ ԵՒ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

3. Գեղեցկութիւնը եւ վազըլիւնը. — Տօք. Ռ. Ռօմ կը գրէ Լա Ռըվիաի մէջ: Խիստ դժուար էր, մինչեւ հիւսա, հիւսանգուծիտմբ, հարուածով եւ կամ ուրիշ որ եւ է պատճառով աւրուած քթի մը իր բնական ձեւը տալ, եւ եղած փորձերը գրեթէ միշտ անյաջող անցած էին: Պ. Ժէնսիւնի զանոնք շակելու գիւրին միջոց մը գտած է: Աւրուած քթին մորթին տակ պարզապէս 2 3 խորանարդ սանթիմէրը՝ տաքուծեամբ քիչ մը լուծուած՝ վազըլին կը ներարկէ Փրալազի աիւկիով, վազըլինը կը պնդանայ, 37 աստիճան ջերմութեան՝ հետեւաբար մարդկային բնական ջերմութեան մէջ. ու պազելու պահուն բաւական է քթին պահանջուած ձեւը տալ: Բայց ինչ կը լինի այդ նիւթը մորթին տակ: Կենդանիներու վրայ եղած փորձերը հաստատած են որ վազըլինը ո՛չ միայն չծծուիր եւ տեղնուտեղը կը մնայ, այլեւ իրեն մերձակոյց գնդերուն վրայ բարելաւ հակազդեցութիւն մը կը յառաջացնէ: Անոր շուրջը կը կազմուի միւտորիչ հիւսկէնի (tissu conjonctif) խաւ մը, որ հետզհետէ ցանցի մը (տեսակ մը կոճիկի) փոխուելով զայն իր մէջ կ'առնէ՝ իր ծակափքները անով լեցնելով: Տօք. Ժէնսիւնի փորձերէն անոնք որ կատարուած են 2 սարիէ ի վեր՝ ուղղուած ձեւը բնաւ փոխած չեն, եւ նորէն գէպի տձեւութիւնը հակում մը չէ տեսնուած:

Միւսոյն մեթոտը, գործադրուելով ուրիշ վիտարիֆ (plastique-ձեւառու) գործողութիւններու մէջ, գոհացուցիչ արդիւնքներ տուած է: Հիւանդի մը վրայ կարելի եղած է վերաշինել, այսպէս, ամբողջ կզակ մը: Տղու մը վերին կզակը ֆախերով վարսկուած ըլլալուն կը հանուի: Ինչպէս որ միշտ կը պատահի, գոյացած սպին կձկելով՝ գէպի վար կը քաշէ աչքին ստորին կոպը եւ գուրս կը ցցէ աչքին գունտը: Սպինի եւ այտին տակը շարք մը ներարկումներ կ'ըլլուն՝ սրտնցմով կարելի կ'ըլլայ վազըլինէ ճշմարիտ կզակ մը շինել, որ կոպը վեր կը քշէ նորէն եւ գէմքին կուտայ գրեթէ իր բնական ձեւը: Դարձեալ վազըլինը նմանորինակ ծառայութիւններ կը մատուցանէ երբ միւլֆօզներու (muqueuse-լորձաթաղանթ) մէջ ներարկուի:

Հետեւեալ գործողութիւնն ալ խիստ հետաքրքիր է. — Գիտենք որ բնական խոտչները, այսինքն ստամոքսը, վիսին (vessie փամփուշտ), միժ աղիքին վերջաւորութիւնը կազմուած են գնդերային օղակներով, որոնք սֆինկթեր (sphincter-պպիւ) կը կոչուին: Երբ այս օղակները ոչնչանան խոտչը բերանայաց (béant) կը մնայ եւ կը թողու իր պարունակութիւնը գուրս հոսիլ: Վերարուծութիւնը երբէք չկրցաւ ոչնչացած սֆինքթէն մը դարմանել: Այդ արդիւնքին կը հասնին, ինչպէս պիտի տեսնէք, վազըլինով:

Կին մը քաղցկեղով (ulcération) կը կորսնցնէ փամփուշտային եւ միզային սֆինքթէնը: Շատ մը օրօփիտարիֆ

(ինքնաձեւառու) գործողութիւններ անկարող կ'ըլլան զայն դարմանելու: Տօք. Ժէռսիւնի մտածեց վազըլին ներարկել սֆէնքթէնի ոչնչացումէն գոյացած ծակին շուրջը եզրող միւքէօզին մէջ: Ու կը յաջողի անով տեսակ մը օղակ կաղապարել ու կատարելապէս փամփուշտին (vessie) բերանը կը գոցէր եւ որ միայն կը բացուէր երբ բնական կծկումով մը փամփուշտը իր պարունակութիւնը արտաքսել ուզէր: Հիւանդը այդ վայրկեանէն բուժուած էր:

4. Նախագոչական ներարկումներ ժանտախտի (fièvre typhoïde) դէմ. — Ժանտախտի դէմ գործածուած ներարկումները տակաւին զիտութեան վերջնական եւ հաստատական եզրակացութեամբ չեն գրոշմուած: Սակայն եւ այնպէս անգլիական բանակին մէջ այդ կարգի ներարկումներ գործ դրուած են լայն սահմաններու մէջ: 1899ի վիճակագրութիւններու արդիւնքը կ'արժէ արձանագրել այս էջերուն մէջ: Եգիպտոսի մէջ 4835 զինուորէ բաղկացած բանակի մը մէջ 461 հոգի ներարկուած՝ եւ բացարձակապէս ազատ մնացած են ժանտախտիցէն, մինչ մնացածներէն 30 հոգի կը բռնուէին եւ 7ը կը մեռնէին: Եմալիքի մէջ 483 հոգի միւլէնոյն մեթոսին ենթարկուելով 2 հիւանդ եւ եւ 1 մահ միայն կ'ունենան: Հնդկաստանի մէջ, ուր ժանտախտի դէմ չափազանց ուժեղ է, 30,325ի վրայ 4502 հակա-ժանտախտի պատուաստին կ'ենթարկուին եւ կ'ունենան միայն 44 հիւանդ եւ 9 մահ, այսինքն 0,98 առ 100 հիւանդութիւն եւ 0,20 առ 100 մահացիութիւն: Զներարկուած 25,851 զինուորներումէջ 657 զինուոր հիւանդ կ'ըլլան եւ 146 մահ կը պատահի, այսինքն համեմատապէս աւելի մեծ կորուստ, 2,54 առ 100 հիւանդութիւն եւ 0,56 առ 100 մահ: Այս արդիւնքները յուսադրիչ են: Աւելի լայն սահմաններու մէջ փորձեր հարկաւոր են տակաւին՝ այդ ներարկումներու ներգործութեան մասին վերջնական եզրակացութեան մը յանգելու համար:

ՄԻԹԱՐ ՍԵՐԱՍՏԱՅՈՒ ՑՈՒԵԼԵԱՆՐ

Արդէն առիթը ունեցած ենք, «Համալսարան»ի Ա. Երջանին մէջ, խօսելու վենետիկեան Միաբանութեան Հայ ազգին մատուցած բազմադիմի ծառայութիւններուն վրայ: Եղած է ան ո՛չ միայն մեր հին լեզուին ու գրականութեան պահպանիչը, այլ եւ իր ծոցէն ծնունդ առնող բեղուն մտքերու շնորհիւ «վերանորոգութեան դար» մը ակօսացած հայ մտքի զարթնումին, որ առանց այդ բանին գուցէ, այսօր, խիստ անպառունակ արտայայտութիւն մը ունենար: Դարձեալ ուղղակի միջնորդ հանդիսանալով, Միթար Սերաստացուն հաստատութիւնը, ասիական Հայուն ու եր-

կու դար առաջ քաղաքակրթութեան ուղին արդէն թեւա-
կոխած եւրոպացիին միջեւ, տուաւ իր ազգային մտաւո-
րականութեան այն ամեն դիւրութիւնները, որոնք պիտի
յղկէին անոր ժառանգական ընդունակութիւնները եւ Հայ
ժողովուրդը դարձնէին Արեւելքի ցեղերուն ամենէ յառա-
ջագէժը եւ ամենէ քաղաքակիրթը :

Մխիթարի գործը անով իսկ գնահատելի է, որ ժողո-
վուրդի մը յառաջգիտութեան մէջ՝ չչփոթեց ան կրօնքը եւ
ազգայնութիւնը. ստորոց իւրաքանչիւրին տալով իր ու-
րոյն ընկերական արժէքը, չվարանեցաւ բնաւ կարեւորա-
պոյնը, այսինքն ազգային ոգին, համերաշխութեան կըու-
ւան ընարել ու անոր վրայ կանգնել այն հաստատութիւնը,
որուն երկու հարիւր արդիւնատու տարիներու հոլովման
չըջանը տօնեց՝ վերհետիկեան հայրերու հետ, ամբողջ հայ
ժողովուրդը, 1901ի Սեպտեմբերին :

Ու եթէ հին մոլիտանոց տարիներու մէջ, զգացումներու
կաշկանդիչ ու աւերիչ այդ շրջանին՝ Մխիթար գիտցաւ
բաժնել կրօնքը ազգութիւնէն, իր կոշորդները՝ նպաստաւոր
պայմաններով օժտուած, արդի ընկերական կեանքին մէջ,
պէտքէ պիտանան հաշտեցնել կրօնքը գիտութեան հետ, իբր
բարեշրջուած շարունակութիւն՝ իրենց յանձնուած գործին,
որուն հիմնադիրը իր ազրած դարուն յառաջգիտութեան
ոգիին հետ հայ ցեղը հաղորդելու համար այնքան անկախ
եւ այնքան ազատագրուած հայեցողութեամբ մը նայեցաւ
զէպի իր եկեղեցին, իր կրօնքը : Բրաւ Մխիթար այդ
բանը իր ազգին սիրոյն համար, ու իր քայլը ապացուցումն
էր գիտութեան ու զարգացումի անկախութեան — անկա-
խութիւն՝ դաւանանքէ, անկախութիւն՝ ազանպէ, — եւ միեւ-
նոյն ատեն մոլիտանոցութեան անկման :

Կը սիրենք տեսնել որ՝ մտաւոր ապագայի մը մէջ,
Մխիթարեան հաստատութիւնը պիտի դառնայ հայ գի-
տուններու ժամադրաւայրը՝ ինչպէս դարձած էր երբեմն հայ
գրականութեան ուսանը : Մխիթարեան հայրերու հետ
պիտի ըլլան ընդմիջա, այդ վայրկեանէն, հայ ազգին հա-
ւատքն ու վստահութիւնը : Երկուհարիւրամեակի տօնը զայդ
ապացուցուց՝ յաւերժացնելով իրաւամբ Մխիթար Սեբաս-
տացու անունն ու յիշատակը : Մ. Պ.

Ռեքրես Պերպերեսնի ֆաւնիկեզաւեսակը. — Զինքը ան-
ձամբ չենք ճանչնար. բայց չենք կրնար հրապարակաւ չի
մասնակցիլ իր երկու տասնեակէ աւելի տարիներու հաս-
րակական օգտակար գործունէութեան տօնին ընդհանուր
խնդակցութեան : Ռ. Պէրպերեսնի մէջ գրապէտը չէ որ մեզ
կը հետաքրքրէ, այլ ազգային մտաւոր գործիչը. այդ սա-
պարէզին մէջ նա եղաւ անձնուէր եւ յարատեւ՝ զարգացած
սերունդի մը երախտագիտութեանը մէջ միայն փնտռելով
իր համեստ փոստսիրութիւնն ու վարձատրութիւնը :

ՎԵՐՁԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅ ԿՐԿԵՐ ԵՒ ԹԵՐԹԵՐ

Ընդհանուր տեսքիւն. — Մեր ընթերցողները հետաքրքրող կարեւոր նորութիւններ չունինք ըսելիք հայ վերջին մտաւոր արտադրութիւններուն վրայ: Մեզի զրկուած գրքերուն մէջ աչքի կը զարնեն մասնաւորապէս երկու շքեղատիպ հրատարակութիւններ՝ 1. Վեներիկեան Յորեյեան (Վենետիկ Ս. Ղազար) եւ 2. Հոգեւ (Վահան Թէքէեան, Տպագր. «Համալսարան») ի գին 3 Փր.): Այս վերջինը բանաստեղծութիւններու հաւաքածոյ մ'է, ուր հեղինակը սիրոյ հոգ պատճառող առիթները կ'երգէ զբայուն լեզուով մը եւ լաւ աշխարհագրաբան մը: Բանաստեղծութիւն սիրողներու համար հետաքրքիր հատոր մ'է: Գալով Մխիթարեան հրատարակութեան, հրտարագեղարուեստական գործն է այդ՝ Ուրբունիէն ու Գեղունիէն յետոյ: Անոր մէջ գետեղուած են Մխիթարի եւ Աբրահանրու կենսագրականները, Ասկէրեան, Չամչեան, Աւետիքեան, Ինճիճեան, Մ. եւ Յ. Աւզերեան, Չախչախեան, Թովմաճեան, Ա. Կ. Բագրատունի եւ Հիւրմիւլի նշանաւոր հայ-

րերու գրական կեանքին եւ գործերու պատմութիւնը, Ս. Ղազարի հիմնարկութիւնը, եւ այլն: Իւրաքանչիւր յօդուած իր նիւթին համապատասխան տեղերու եւ անձերու նուրբ պատկերներն ունի: Մխիթար Սեբաստացուն նկարը սակայն, հակառակ որ չափազանց կոտարեալ արուեստով մը ներկայացուած է, չեչտուած գունաւորութեան մը մէջ՝ պարզութեան կորովի տպաւորութիւնը չի թողուր:

Ազգա խօսք. — Փոքրածաւալ ամսաթիւրթ մը որ, պ. Ե. Օսեանի պատասխանատուութեան տակ, երեք ամիսէ ի վեր կը հրատարակուի, Փարիզի մէջ: Անկախօրէն, առանց պայմանի եւ աչառութեան՝ հայ բարքերու մընայլ միջավայրին մէջ՝ ծիծաղկոտ սրամտութեամբ, ճշմարտութեան ազատ խօսքը պիտի ընէ ան, նախապէս հաշտուած անխուսափելի անախորժութիւններու պաճանջած զոճաբեման հետ: Կը մաղթենք որ Ազգա խօսքը միշտ խնդայ...

ՌՐԱՆՍԵՐԷՆ ԿՐԿԵՐ

Գիտութեան ազդեցութիւնը Ֆրանսական գրականութեան վրայ 19րդ դարու վերջի կեսին մեջ (Robert Frath. Lausanne, Payot—1901). — Հեղինակը կ'ըսէ որ վերջին կէս դարուն մէջ Ֆրանս. գրականութիւնը չափազանց կրած է գիտութեան ազդեցութիւնը, որուն որոշ յատկանիշը ըստացած է: Ընդհ. ակնարկ մը նետելով գիտութեան եւ գրականութեան վրայ, 19րդ դարու մէջ, կը հաստատէ որ պատմութիւնը մինչ երբեմն փիլիսոփայութեան եւ պերճախօսութեան վրայ հիմնուած էր, հիմա գիտու-

թեան (հնէարանութեան, մարդաբանութեան եւ բանասիրութեան), այսինքն առհասարակ բնապատմութեան մեթոտներով եւ վերլուծական եղանակներով կ'առաջնորդուի: Տարուինի եւ իր յաջորդներուն ուսումնասիրութեամբ մարդը ազատագրուեցաւ իր գիցաբանական ծագումէն եւ իր բնական միջավայրը մընաւ: Բլոսա Պէրնարի եւ Փասթէօնի շնորհիւ կենդանի էակներու մարմնոյն վրայ փորձերը կարելի դարձան ու հաստատուեցաւ այն սկզբունքը թէ անոնց զոյութեան պայմանները՝

ինչպէս կոչա մարտիրոսներու մէջ, իւրենց երեւոյթներով կը բնորոշուին: Փորձի ուժեղ կարեւորութիւնը մատնանիչ կ'ըլլուի բարոյական եւ քաղաքական ըտեւած գիտութիւններու մէջ, եւ այսպէս ժամանակակից բարոյականութեան մը հիմը կը գրուի:

Նիւթապաշտութիւնը հոգեկան վարդապետութիւնները կը գանապոճէ եւ նոր լնագանցութիւն մը կ'ատարձէ՛ կայուն հիմերու վրայ: Բնախօսական եւ փորձատական հոգեբանութեանց սերմերը Գարգակադմութեան եւ ուղեղային բնախօսութեան մէջ ուճացան: Հոգիին հին կարողութիւնները փոխուեցան այնքան՝ որքան անհատին ըմբանումները:

Պատճառւորականութեան եւ խզճի ձայնին միջեւ կռիւը վերջացաւ նոր հոգեբանութեամբ ու այս վերջինին աչքի զարնող յատկանիշը գարձաւայն, որ կը ջանայ ուղեղային մեքենականութեան վրայ ճշմարիտ սեռութեան մը յանդիւ, արտաբանական կրեւոյթներու ուսումնասիրութեամբ մը, ու հոս է որ մատուցին մեծ ծառայութիւններ խքերի՛ն եւ մատուր հիւանդութիւնները առ հասարակ:

Գիտութիւնը հաւատք գարձաւունախնական քրիստոնէութեան ապագայ պատմարան, Ռընան, զոչեց. «Ըսենք առանց վախճալու թէ պատիր սքանչելիքը կըրցաւ մինչեւ հիմա անհրաժեշտութեան թուիլ բանաստեղծութեան, բնութեան սքանչելիքը կըր իր բոլոր պերճախօսութեամբը պարզուի՝ այս անպամ պիտի շինէ հոյակապ բանաստեղծութիւն մը, որ ճշմարտութիւնը պիտի բլլայ ինքնին՝ լինելով միեւնոյն ատեն գիտութիւնն ու փիլիսոփայութիւնը:» Ու կարելի արգարութեան եւ ազատութեան հանելուկին լուծումը բնութեան օրէնքին ծանօթութեանը մէջ տեսնող ք. Պէրնարէն յետոյ՝ Փօլ Պէր եւ Պէրթըլօ գիտութեան համաշխարհային յաղթանակին գալուստով միայն մարդկային երջանկութիւնը եւ բարոյական բարձրութիւնը իր արժէքին տկարանալը զբաց՝ գիտական ճշմարիտ կրթութեան մը ներկայութեան: Գրականութիւնը իր գառնայ իր կարգին բոլորովին, եւ Տարուինի, Թէնի, Կ. Պէրնարի ըսկզբունքներով կը կառավարուի: Գրագէտէն միեւնոյն յատկութիւնները կը պահանջուին ինչպէս գիտականէ մը, վերլուծելու եւ գիտելու նուրբ կարողութիւնները: Այլ եւս պէտք է գեղեցկագիտական ճաշակին եւ զգայումնիրու գոնացում առ՝ այլ պէտք է ձանջնալ եւ գիտնալ: Վիպասանները մշակած էին մանաւանդ զգացումը եւ երեւակայութիւնը, թատրոնէն սկսած մինչեւ պատմութեան մէջ բանաստեղծութիւնը զրած էին: Ընդհակառակը, իրապաշտ գլորցը կը ջանայ քննական զբացողութիւնը վարդացնել եւ ճշմարտին միմիայն հետապնդիլ: Բանաստեղծութիւնը արձակին տեղի կուտայ: Իրապաշտութեան նախակորագիտները անով գրեթէ չեն հետաքրքրուիր, այսինքն Պալլաք, Սթէնտալ նախ՝ եւ յետոյ Ա. Տիւմա ու Ջօլա: Բանաստեղծութեան մահը մտաւուտ է:

Գիտականները, վիպասանութեան հերոս-անձնաւորութիւնները գարձան, ինչպէս Ջօլային Տօք. Փասկալը, ու բժիշկը ընկերութեան մէջ ստացած իր կարեւորութեամբը խիզճիլու անօրինութեան պաշտօնը քահանայէն իջելու կըլաւ:

Գրականութիւնը՝ բացի գիտութեան ազդեցութենէ՛ կրեց նաեւ ինտրուաքի ազդեցութիւնը, որոնք անբաժանօրէն իրարու կը ձուլուին յաճախ: Այս մասին իբր վկայութիւն Օկիւսթ Գօնթի 1852ին հիմնել

ջանացած «Մարդկային կրօնքը» :

Փորձառական ռուսներ գրականու-
կան յղացում մը եղաւ ու Ջօլա կը
փութար գրել թէ մարդուն ապագան
գիտութեամբ զարգացած արամսբա-
նութեան մէջ է եւ թէ գիտութեան
ճշմարտութիւնէն պէտք է սպասել
աստուածային իտէալին իրականա-
ցումը : Պ. Բօլ Պուսէ, ինք որ իրա-
պաշտ մը չէ, գիտութեան մէջ կը
տեսնէ ճշմարտութիւն մը որ վերի
վար շրջելու է գպրութիւնները : —
Այս շրջումն է որ ժամանակակից
գրականութեան գլխաւոր ճիւղե-
րուն, վիպասանութեան, բանաս-
տեղծութեան, թատրոնին մէջ գըր-
քին հեղինակը մատնանիչ կ'ընէ :

Ձոյսիկի մը քսակ եւ մէկ օրերը (Les
vingt et un jours d'un neurasthénique
Fasquelle, édit.) Օքրալ Միւսպ. —
Փրանսացի նշանաւոր հրապարա-
կագիր-գրագէտին այս նոր գործի
անունը սկիզբէն գուշակել կուտայ
հանճարեղ երագողի մը կամ երեւա-
կայական հիւանդութիւնէ բռնուած
արթիստի մը քմահաճ նկարագրու-
թիւնը՝ վանքանսի մը միջոցին,
քաղաքի ալմիալից կեանքէն յե-
տոյ, գիւղերու մէջ իր անցուցած
խաղաղիկ վիճակին եւ կամ բնու-
թեան իր վրայ թողած քաղցր տը-
պաւորութեան : Բայց բնաւ այդպէս
չէ : Չարչարակներու պարսկիկն եւ
Կողզորայիկ հեղինակը պահած է իր
գաժան գրագէտի գրոշմը այդ գործին
մէջ եւս, չառանց իր կորով իեւնկարուն
ներդաշնակութիւնը սկարացնելու :
Դիպուածէն փրէնիտան կայսրան
մը զրկուած՝ չէ բաժնուած իր մը-
տածման սովորական նիւթէն : Աւելի
մօտ ունենալով իր աչքին մարդոց
նմուշներ որ կը խառնաշփոթեն փա-
րիկեան խաւերուն մէջ իրենց մանր
կիրքերը, մեծ ու պղտիկ սնափառու-
թիւնները, բացարձակ ուրախու-
թիւնները եւ հոգիներու իրական
աղքատութիւնը, — ողբերգական եւ
ձիճաղելի աղքատութիւն, — բնորո-

շած է գրչի մէկ հարուածով մը այդ
ամենը, գնելով հոն իր սուր տեսու-
ղութեան շունչը :

Ամբողջ տարուան մը իր հրապա-
րակագրութիւնը ճարտարօրէն հոն
սեղմած է. ու հոն են իր համակ-
րանքներն ու հակակրանքները ի-
րենց ըլոր խոշտանգումովը :

Ծովային քաղաքներու ժամանակ
սպաննող յարաբերութիւնները, ան-
նպատակ շրջագայութիւնները, հոն
ներկայացող բազմաթիւ գէմքերու
զուգորդական թելադրականութիւ-
նը, անցած ու մուցուած գէմքերու
վերջուշումով՝ կրքերու յուզալա-
ռումը, նորէն օրագրական նիւթի
առատ հուսնձքը, տափակ գրագէտներ,
ան իրաւ փառքեր ծաղրելու մարմալը
այդ առոյգ ծուլութեան վայրերուն
մէջ քաղաքական խնդիրներու յա-
ճախանքը, երջանիկները պաշտպա-
նող օրէնքին վայրենիութիւնը եւ
գրամատպաշտ անձնատիրութիւնը,
վերջապէս փարլըմանի կատակեր-
գութիւնները՝ Օքթալ Միւսպի
խածնող եւ յարձակողական գրչին
տակէն կ'անցնին երանգուած եւ
բզբտուած :

Նորածեութեան հնազանդելու հա-
մար ծովային ջուրերը վազող, իրենց
ձանձրոյթը քառսէն ոչնչութիւն
պատոյնող եւ ջերմուկներու մէջ եւ-
րեւակայական հիւանդութեան գար-
ման փնտոող այդ խառնիճաղանձ
ամբոխին վրայ՝ բնատիպ եւ յաս-
կանչական նկարագրութեամբ մը՝ իր
զայրոյթը կը հոսեցնէ. անգործ, բը-
նութեան լայն բմբռնումներուն ան-
ընդունակ եւ աբիտացած այդ ամ-
բոխին գէմ, որ կը թուի աւելի կոր-
սուած ըլլալ՝ աւելի շփոթուած, քան
իրենց փարսխներէն գուրս Կիւած
հօտերը :

Իրքին շեշաը աւելի մուրանուշ է :
Հոն կը գտնուին ժպտուն եւ կեն-
դանի պատկերներ, ձիճաղաշարժ
նկարագրութիւններ, ինչպէս տար-
բինակ գէմքերու ներկայացումին
մէջ, «Բլաւա ֆիսթիւլ», «Փառապօլի

Մարքիզուհին») և «Փռէզալէի գընգապետը»: Ամբողջութեան սպաւորութիւնը ուժգին է և գառն: Ալպեան և Փիրենեան բանորամային ճշմարիտ սիրահարներու անջքին առջև լեռները կարծես կ'ամփոփեն նեղ միջոցի մը մէջ, երկրին ամբողջ հարստութիւնը: Մէկ ակնարկով կարելի է տեսնել հոն մշակութիւնները, անտառները, մարգերը, ցըցւած ժայռերը, հեղեղուտ ջրլէժները, որոնք կը հակադրեն լեռներու գագաթին վէտ խորխորանքին իրենց ջախջախումներն և փրփուրը: Սաւոյցը, ձիւնը, որոնց վրայ ամեն երեկոյ արեգակը իր նուազկոտ շողին ամենէ սքանչելի գունազեղութիւնը կը շրջապայեցնէ: Լեռներու մեծ ծանրութիւնը կը ճնշէ, կ'ոչնչացնէ Օքթավ Միւսօն: Դիպուղ խաւարն ու ծանր պատուարն է որ կը հակադրուին բաղձանքի թուիչին և գայն գրեթէ կ'անէացնեն: Յաճախ երկար ու յարտեւ բարկութիւն մը ունեցած է լեռներուն դէմ և

հակահարուածով մը մարդկութիւնը անոնցմէ ճզմուած է:

Միւսօ ծանօթ է իր խտաբարոյութեամբ՝ գատաւորի պաշտօնին մէջ: Երգիծանքը իր մէջ միայն արատքինով անգութ է: Գիշ մը կոչա սրամասութեան, համակրութիւններու և հակակրութիւններու անզունակ քմահաճոյքին և քանի մը նորօրինակ խուսափանքներու մէջէն՝ կ'ըմբռնուի այս գրքին, ինչպէս իր նախորդներուն մէջ, գրագէտին խորունկ հակումը դէպի գութը, անոր պաշտպան ճիգը դէպի տկարը, հալածեալը, և վերջապէս յոռետեսի այն անկեղծ և սիրեփաւիւնը որ այնքան դամաւորէն կը նեղէ ընկերական կիրքերուն և անհատական խելյեղանքներու, պահսութիւններու և տկարութիւններու ուսումնասիրութեան մէջ, որովհետեւ, վերջապէս, հոն է որ կը զգայ և կը լսէ մարդուն հոգւոյն ապրելը:

Ֆ. ԼՕԼԻԷ

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓԱՐԻՉԻ ԲՆԱՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԻԻԶԵՍՐԸ

Այս գիտական հաստատութիւնը կոչուում է, ընդհանրապէս, «Բուսաբանական պարտէզ» (Jardin des Plantes): Այստեղ կատարուում են, մանաւանդ գիտական խուզարկութիւններ և պատրաստուում հաւաքածոներ: Իւրաքանչիւր հաւաքածոին յատկացուած է յատուկ պրոֆէսոր, որ պարտաւոր է մի տարուայ ընթացքում առնուազն չորս հրապարակային դասախօսութիւններ կարդալ: Տասնեութը ամբիոններ կան, որոնցից կարող են օգտուել ուսանողներն և մանաւանդ՝ մասնագէտները: Ահառասիկ այդ ամբիոններից պատասխող յայտնի պրոֆէսորների անունները: Պ: Յիլէօլ (բաղդատական կազմաբանութիւն), — պ. Համի (մարդաբանութիւն), — պ. Գօարի (հնէաբանութիւն), — պ. Գրէհան (ընդհանուր բնախօսութիւն), — պ. պ. Ուտալէ, Վայիան, Բուվիէ և Էդմոն-Պէրիէ (կենդանաբանութիւն), — պ. պ. Վան-Տիգն և Իիւր (բուսաբանութիւն), — պ. Սդանիսլաւ (երկրաբանութիւն), — պ. Լակոուա (հանքաբանութիւն), — պ. Մաքսիմ-Կոռնի (մշակութիւն), — պ. Բէքրէլ (բնագիտական բնապատմութիւն), — պ. Տուեօ (գործնական քիմիա), — պ. Շովօ (բաղդատական արտաբանութիւն), — պ. Դըհէրէն (բուսական բնախօսութիւն):

Միւզէօմի՛ն յատկացուած է Տատիու (Մանչի ծովափին) կենդանաբանութեան աշխատանոցը, ուր գնում են ամառները բազմաթիւ գիտնականներ եւ ուսանողներ Յրանսիայի ծովային կենդանիները ուսումնասիրելու համար :

Դասախօսութիւններին հետեւելու համար որ եւ է վկայագիր չէ պահանջուում : Կանոնաւոր ուսանողները կարող են պրօֆէսօրներից կարտ (վկայաթուղթ) ստանալ, որ գիւրացնում է հաւաքածոյների սրահներին մուտքը :

Կօնֆէրանսների եւ գործնական աշխատութիւնների համար պէտք է միայն արձանագրուիլ : Գրագրանը բաց է հասարակութեան համար ամեն օր ժամը 10ից մինչեւ 4ը : Այն բաժանումները, ուր հաւաքածուներն ու կենդանի անասուններն են գտնուում, բաց են օրուայ որոշ ժամերին ինչպէս ուսանողների, նոյնպէս եւ բոլոր այցելուների առջեւ : Պրօֆէսօրներն այդտեղ են կատարում երբեմն իրենց գասախօսութիւններն եւ ասպացուցումները :

Գիզեցիկ եղանակներին, կատարում են կանոնաւորապէս բուսաբանական շրջագայութիւններ Փարիզի շրջակայքում պ. Բիւրօի առաջնորդութեամբ, ինչպէս նաեւ երկրաբանական հետազոտութիւններ՝ պ. Ստանիսլասի առաջնորդութեամբ : Ամին ոք, անխտիր, կարող է մասնակցել այս շրջագայութիւններին, որոնց ընթացքում բացատրում են ինչպէս միջատներ ժողովելու եղանակը, նոյնպէս եւ նրանց կենցաղավարութիւնները : Այս շրջագայութիւնների ընթացքում, նախապէս արձանագրուածների ճանապարհածախքը զեղջուում է 50 օր :

Արտիստները եւ առհասարակ ճարտարագործութեամբ զբաղողները այնտեղ գտնում են զանազան մօզէլներ իրենց աշխատութիւնների համար մասնաւոր արտօնութեամբ :

Այս միւզէօմում կարելի է ձեռք բերել բնապատմական գիտութիւնների դօքտօրի եւ ազդեցատիօնի (պրօֆէսօր դառնալու անհրաժեշտ աստիճան) տրոդոտները : Մասնաւորապէս ֆրանսիացի թեկնածուներին յատկացուած է նաեւ եօթը հատ 1500 ֆրանքնոց մրցանակներ :

Հրաւիրում ենք մեր բնապատմութեամբ պարագող անձանց ուշադրութիւնը Փարիզի այս հազուագիւտ միւզէօմի վրայ :

ԵՆՐՈՒՍ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

Կը փութանք ծանուցանել թէ՛ նոյեմբեր Ծին շնորհակալութեամբ ստացանք Վեհափառ Կաթողիկոսէն օրհնութեան եւ գնահատութեան Կոնդակ մը, զոր չկրցանք Հաւաքարանի այս թիւին մէջ զետեղել, տպագրութիւնը վերջանալու մօտ ըլլալուն պատճառաւ :

Յառաջիկայ թիւով՝ Հայրապետական Կոնդակին հետ, պիտի հրատարակինք նաեւ Խմբագրական մը Հայ Կղերք եւ Գիտօրինք :

ԽՄԲ.

ԻՇԵԱՆ ԳՈՒԻՏՈՆ ԼՈՌՍԻՆԵԱՆ

Ն Ո Ր Բ Ա Ռ Գ Ր Ք

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Չ Ա Ր Դ

Յ Ր Ա Ն Ս Ա Հ Ա Յ

ZUSNR Ա. — (A — H)

Մեր մէջ՝ ինչպէս գրական՝ նոյնպէս եւ գիտական բառերու ճշ-
խութեամբ այս միակ ընդարձակ բառարանին առաջին հատորը կ'արժէ 25
ֆրանք (Թղթակազմ) :

Երկրորդ հատորը, որ նոյնպէս 25 ֆրանք պիտի արժէ, մօտ է աւար-
տելու :

Գնելու համար գիմելու է առ մասնագիրն 108 Avenue de Neuilly, à
Neuilly sur Seine—Près Paris. (France)

Իշխան Գ. Լուսինեանի ուրիշ գործերէն զնէլ ուզողները կրնան դիմել
նաեւ մեր հասցեին, որոնց ցուցակը պիտի հրատարակենք :

ՄԿԱ ՎԱԽ ԶՈՒՆԻՄ

(ԳԻՒԼՍՏԱՆՅԻ) — ԳԻՆ 50 սանթիմ

Ո Ի Խ Տ

(ԲԵԼԼՈՒ-ԲԷԿԵՍՆ) — ԳԻՆ 1 ֆրանք

Ազգային կեանքէ առնուած այս երկու հետաքրքիր եւ կարեւոր ան-
ձերու վաւերական նամակ պարունակող գրքոյկները կ'արժէ որ ամեն մարդ
ունենայ : Հասոյթը՝ (ծախքերը գոցուելէ վերջ) հեղինակը հայ որբերուն
կը յատկացնէ : Գնելու համար գիմել Impr. B. Missac, 4, rue Ortolan—Paris,
կամ Impr. Arménienne (Venise St. Lazar, Italie).

Հ Ո Գ Ե Ր

(ՎԱՀԱՆ ՓԷՔԷՆԵԱՆ)

Գ Ի Ն 3 Յ Ր Ա Ն Ք

Գիմել V. Tékéian 6, rue d'Arcole — Marseille.

Ա Ջ Գ Ա Ր Ա Ր Ո Ռ Փ Ի Ի Ն

Ա. Շրջանի մեր բաժանորդներէն անոնք որ իրենց բաժնեդիւնները
տակաւին չեն զրկած, թող հաճին մեզի իմացնել թէ ե՞րբ կը փափաքին
վճարել, ինչպէս ոմանք ըրած են այդ բանը : Հակառակ պարագային իբր
«չվճարողներ» նկատելով զիրենք՝ անախորժ միջոցներու պիտի դիմենք :

Հաւանաւարանի Բ. Շրջանին 1 թիւը անխտիր կը ստանան մեր բոլոր
հին բաժանորդները : Կը խնդրենք որ հաճին զայն մեզի վերադարձնել
մինչեւ երկրորդ թիւին երեւումը, այսինքն զեկա. 15, եթէ չեն փափա-
քիր բաժանորդագրութիւնին շարունակել :

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Բ. ԾՐԶԱՆ

Իւրաքանչիւր Շրջանին մէջ կուտայ 12 թիւ: Բաժանորդագրութիւնը թիւի վրայ է:

12 թիւ ամեն երկիր 10 ֆրանք, (4 րուբլի, 2 տոլար):
6 " " " 6 " (2 1/2 " 1տ. 20 ս.):

Տաճկաստանի եւ Պարսկաստանի համար 8 ֆրանք (40 դր. ոսկեղրամ):
6 թիւի բաժանորդագրութիւնը այս վերջին երկիրներու համար 5 ֆրանք (25 դրուշ):

Այն կրթական հաստատութիւնները՝ որոնք լայն պիւտճէ մը չունին, կրնան ստանալ 12 թիւը կէս բաժնեգինով, այսինքն 6 ֆրանքի:

Նամակ կամ բաժնեգին եւ թղթակցութիւն ճիշտօրէն-խմբագրին՝

Missac Baghdassarian

4, rue Ortolan — PARIS (5)

«ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Ախլայիս (Ռուսիա)	Արժ. Տ. Ներսէս քհյ. Համբարձումեանց
Դալիբեժ (Պարսկ.)	Տօք, Կարապետ Փաշեան
Եգիպտոս (Աղեքսանդրիա)	Պարոն Միհրան Զրաքեան
Թիֆլիս (Ռուսիա)	Արժ. Տ. Եզնիկ Աւագ քհյ. Երզնկեանց
Լին (Ամերիկա)	Պարոն Յակոբ Պէրպէրեան
Ուսթրիկա (Ամերիկա)	Պարոն Կարապետ Ստեփանեան
Տրայպիզոն	Պարոն Պ. Սիմաւոնեան

ՏՊԱՐԱՆ - ԳՐԱՏՈՒՆ " ՀԱՄԱԼՍԱՐԱՆ " Ի

Ա. Շրջան Հանաչարանի (12 թիւ թղթակազմ)	8 ֆրանք
» » (» կէս կաշի)	10 »
» » (» կէս կաշի ոսկեգօծ)	12 »
Ֆրանսոսայ պատկերազարդ բառարան (A—H) (Իշխան Գ. Լուսինեան)	25 »
Մկա Վախ Զուռիմ (Գիւլստանցի)	— 50սանթ
Ուխտ (Բէլլուբէկեան)	1 »
Հոգեք (Վահան Թէքէեան)	3 »
Ուարազան (Ս. Պարթեւեան)	1 »

Այս հրատարակութիւնները մեծաքանակ գնողներուն գոնացուցիչ զեղչ կը լինի:

«ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»Ի (Պ. Միսաք) տպարանին մէջ կը լինին առեւտրային տպագրական աշխատութիւններ խիստ խնամուած կերպով եւ պահանջուած կատարեալ նրբութեամբ:

Յանձնարարութիւնները կանխիկ են եւ կը կատարուին ճշգրտութեամբ եւ փութով:

Տպարան-Գրատան վերաբերեալ ամեն յանձնարարութիւն ղրկել.

Imprimerie B. MISSAC

4, rue Ortolan — PARIS